

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդական միջազգային
գիտաժողովի հոդվածների ժողովածու
25-26 օգոստոս, 2023
Գյումրի

ՀՏԴ 398:78(082)

ԳՄԴ 82+85.31g43

U 430

*Հոդվածների ժողովածուն հրապարակության է երաշխավորվել
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական
խորհրդի որոշմամբ:*

*Հրապարակվում է ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ
22YR-6B030 «Շիրակի մանկական բանասիրությունը»
գիտական թեմայի շրջանակներում
(թեմայի գիտական ղեկավար՝ ր.գ.թ. Հասմիկ Մալիկյան):*

Խմբագրական խորհուրդ՝
ր.գ.դ., Ս.Հայրապետյան (գլխ. խմբագիր, Հայաստան)
ր.գ.թ., Հ.Մառիկյան (Հայաստան)
ր.գ.դ., Ս.Բրոններ (ԱՄՆ)
արվ.թ., Հ.Հարությունյան (Հայաստան)
ր.գ.թ., Ա.Հայրապետյան (Հայաստան)
ր.գ.դ., Դ.Կումար (Հնդկաստան)

U 430 «Սերունդների երկխոսություն»: Երիտասարդական միջազգային գիտաժողովի
նյութեր: 2023, Գյումրի: Հոդվածների ժողովածու: Գյումրի: ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023.-150:

*Ժողովածուն ընդգրկում է 2023թ. օգոստոսի 25-26-ը ԳԱԱ Շիրակի հայագիտական հե-
տազոտությունների կենտրոնում անցկացված «Սերունդների երկխոսություն» երիտասար-
դական միջազգային գիտաժողովին ներկայացված զեկուցումները գիտական հոդվածների
տեսքով: Դրանք վերաբերում են մանկական բանասիրության, ազգագրության, երաժշ-
տագիտության, հեքիաթագիտության տարաբնույթ հարցերին: Ժողովածուն նախատես-
ված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:*

ISBN 978-9939-1-1794-2
DOI:10.54503/978-9939-1-1794-2

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ ՁԻՈՒ ԿԵՐՊԱՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՐՁ

(ՇԻՐԱԿՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ՆՄՈՒՇԻ ԶՈՒԳԱԴՐՄԱՐ)¹

Հասմիկ Մատիկյան

Բ.Գ.Թ.

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան, Հայաստան*

Արմանուշ Վարդանյան

Ազարանի մարզամշակութային կենտրոն ՀՈԱԿ, Հայաստան

Արեգնազ Մելիքսեթյան

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Հայաստան*

Նախաբան: Հոդվածում անդրադարձել ենք մանկական երգերում ձիու կերպարի գեղարվեստական ընկալմանը. ուսումնասիրության տիրույթում են նաև հեղինակային ստեղծագործությունները:

Ուշադրության առանցքում է եղել Կոմիտասի «Փայտե ձիուկ» ստեղծագործությունը, որը համեմատել ենք Շիրակում լայնորեն տարածված «Ձի, ձի, փայտե ձի» մանկական բանաստեղծության հետ: Նշել ենք երկու ստեղծագործություններում որպես հերոս հանդես եկող ձիու կերպարի առանձնահատկությունները, կարևորել ենք Շիրակ աշխարհում ձիու խորհրդանշի դերը՝ համեմատելով Խ.Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքում հանդիպող, Պայթող աղբյուրից դուրս եկած հրեղեն նժույգի կերպարի հետ:

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6B030 ծածկագրով «Շիրակի մանկական բանահյուսությունը գիտական թեմայի շրջանակներում:

Աշխատանքի նպատակն է պարզել, թե ինչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններում և Շիրակում տարածված մանկական բանաստեղծություններում հանդիպող կենդանիների կերպարները, ընդգծել վերջիններիս խորհուրդը:

«Կոմիտաս վարդապետն ավանդական երաժշտության հավաքումը, դասակարգումը և ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դրեց: Նա աշխարհում առաջին երաժշտական ֆոլկլորագետներից է: Ողջ գիտակցական կյանքի ընթացքում նա պարբերաբար մեկնել է տարբեր բնակավայրեր՝ հավաքելով ավանդական երաժշտության նմուշներ: Նախապատվությունը տալիս էր խուլ գյուղերում գրառված երգերին, քանի որ այնտեղ օտար ազդեցությունները քիչ են, և երգը պահպանվում է իր անաղարտ վիճակում: Այս աշխատանքը շատ դժվար էր, քանի որ գյուղացիները հրաժարվում էին երգել երգի իրական միջավայրից դուրս, պարզապես գրանցելու համար: Ըստ Կոմիտասի. «Շատ դժվարությունով կամ ամենեին չեն երգում, նոյնիսկ ծաղր են անում, եթե մի ոչ գյուղացի խնդրէ, որ, օրինակ, մի շինականի երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը: Ժողովուրդն արուեստական երգեցողությունն ասած բանը չը գիտէ: Իւրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում: Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը» [3, էջ 377]:

Հաղթահարելով դժվարությունները՝ Կոմիտասին հաջողվել է գրառել և այդպիսով մոռացումից փրկել հայ ավանդական երաժշտության հազարավոր նմուշներ: Այդ թվում են հայ հոգևոր ու ժողովրդական երաժշտության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Մոկաց Միրզա» վիպերգը, «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածները, «Կռունկը» և պանդխտության երգեր, «Լոռվա գու-

թաներգը» և աշխատանքային այլ երգեր, «Տիրամայրն» խաչելության ողբը, Գրիգոր Նարեկացու տաղերը և այլն»:[4]

Հայ մեծանուն երգահան, կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետի երաժշտական ժառանգության մեջ առանձնանում է վարդապետի մանկական երգերի պարզ ու մաքուր աշխարհը: Ինչ խոսք, նրա երգերը բազմաժանր են ու բազմաբովանդակ, և յուրաքանչյուր հայ, աշխատավոր ժողովրդի գավակ կարող է գտնել իր առօրյային, մտահորիզոնին ու աշխարհընկալմանը հարազատ երգեր ու ելևէջներ Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններում կամ ժողովրդից գրի առած երգերում: Բացառություն չեն նաև նրա մանկական երգերը, որոնք լի են բնությանը, կենդանիներին նկարագրող/գովերգող տողերով, սակայն Կոմիտասը սոսկ չի նկարագրում, նա սեր է սերմանում դեպի բնությունը, դեպի կենդանին, դեպի արդարը, պարզն ու հովվերգականը: Մեծանուն վարդապետի մանկական երգերից են «Լորիկ», «Կաքավիկ», «Ջան գառնուկ», «Այ իմ գնդակ», «Զըպիկ-զըպիկ», «Գացեք տեսեք», «Փայտե ձիուկ» և այլն:

Կոմիտաս «Փայտե Ձիուկ»

Տրո՛ւի, տրո՛ւի, տրո՛ւի,

Վազե, ձիուկ, հո՛ւյ,

Քարեն վեր,

Դարեն վեր,

Միրուն ձիուկ,

Դեպի լեռ.

Տրո՛ւի, տրո՛ւի, տրո՛ւի,

Հո՛ւյ, հո՛ւյ, հոս:

Թա'ի, թա'ի, թա'ի,
 Գերեն անցիր աի,
 Մի' վազեր,
 Մի' կուրեր,
 Կարմիր ձիուկ,
 Իմ ուրներ.
 Թա'ի, թա'ի, թա'ի,
 Ա'ի, ա'ի, ա'ի:
 Պոռու', պոռու', պոռու',
 Այժմ կեցիր դու,
 Ու արի,
 Կեր գարի,
 Գիրուկ ձիուկ
 Քաջարի.
 Պոռու', պոռու', պոռու',
 Դու', դու', դու':[6]

Բերված հատվածում քնարական հերոսը ձիուկին դիմում է «Մի-
 րուն ձիուկ», «Կարմիր ձիուկ», «Գիրուկ ձիուկ» կոչականներով,
 որոնցով արտահայտվում է մանկան փաղաքշական ընկալումը
 կենդանու հանդեպ: Անդրադառնալով երգում հնչող «Կարմիր
 ձիուկ» արտահայտությանը՝ ասենք, որ կարմիր ձին կամ աշխետը
 հաճախ է հանդիպում հայկական ժողովրդական հեքիաթներում՝
 որպես հրեղեն նժույգ, առասպելական կենդանի, որն օժտված է
 մարդկային հատկանիշներով՝ խոսքով, բանականությամբ,
 իմաստությամբ, աներևակայելի ուժով: Հայ դյուցազնավեպում
 որպես առանձին կերպար հանդես եկող Քուռկիկ Ջալալին ևս

հրեղեն է, գերբնական կարողությունների տեր, իմաստուն: Էպոսում այն հաճախ է հանդես գալիս որպես խորհրդատու և առաջնորդ իր տերերի համար: Ասվածի լավագույն վկայությունը 20-րդ դարի 60-80-ական թվականների հայկական արձակի նշանավոր վիպասան, Կորուսյալ երկրի բանասաց Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքի «Պայթող աղբյուրի հրաշքը» գլխում պատկերված հրեղեն ձիու կերպարն է, որ, դուրս գալով Պայթող աղբյուրի ակունքից, Մոսե Իմոյի և հայդուկների ու հատկապես հայոց աշխարհի համար կանխագուշակում է Անդրանիկի հաղթանակը:

«Հերիք է, որ քո ձեռքը երեք անգամ զարկես նրա մեջքին, որ նա զորանա ինձ պես և ավելի երկար ապրի, քան ձին երկրային: Եվ այն ժամանակ նրա հեծյալին պարտություն չի լինի, վիշապը կսպանվի, և կրթանն ու իր ձագերը կազատվեն»[2, էջ 116-117]:

Այսպիսով՝ կարմիր, աշխետ կամ հրեղեն ձիու մոտիվը հարազատ է հայ բանահյուսական ժառանգությանը, իսկ վերջինիս խորհուրդը մարդու նպատակների, ներքին մղումների, երազանքների, մուրազի կատարումն է: «Ձի-ձի, փայտե ձի» մանկական բանաստեղծության մեջ ևս փոքրիկը ձին կարմիրով է ներկում, որը նրա մտապատկերում զուգահեռվում է հրեղենության գաղափարին:

Հրաչյա Աճառյանի 1976 թվականին լույս տեսած «Հայերեն արմատական բառարանում» աշխետ բառը բացատրված է որպես կարմիր-դեղնագույն, հրագույն [1, էջ 218]:

Ձի-ձի, փայտե ձի

Ձի-ձի, փայտե ձի,

Մեր դռանը կապեցի,

Կարմիր գույնով ներկեցի,

*Ով որ ունի այսպես ձի,
Թող զա ինձ հետք նա մրցի:*

Համեմատելով այս երկու հատվածները՝ տեսնում ենք, որ Վարդապետի երգում ձին կենսունակ է ու քաջ, կարող է կտրել-անցնել գետը, բարձրանալ դարավանդը և այս ամենից հետո ուտել վաստակած կերը: Երկրորդ գործում ձիուկը փայտից է, չնայած անկենդան է, սակայն քնարական հերոս մանուկը հավատում է, որ փայտե կարմիր ձիուկը անպարտելի է:

Շիրակում փայտից քանդակված կամ սարքված ձիեր հաճախ են հանդիպել, սրանք կիրառվել են որպես խաղալիք, իսկ ավելի ուշ՝ որպես տեղանքի կոլորիտն ապահովող բաղադրիչ:

Բացի բանահյուսական և ազգագրական վկայություններից՝ հայտնի է նաև ձիու միջոցով մի շարք նյարդաբանական հիվանդություններ բուժելու մշակույթը, որը կոչվում է հիպոթերապիա: «Բուժական ձիավարությունը մարդու օրգանիզմի վրա ունենում է բիոմեխանիկական ազդեցություն և ամրապնդում է այն: Ձիավարության ընթացքում մարդու մոտ նկատվում են այնպիսի շարժողական իմպուլսներ, որոնք լինում են քայլքի ժամանակ: Ձիու մեջքի մկանների բարդ շարժումները ունեն մերսող և թույլ տաքացնող ազդեցություն (ձիու մարմնի ջերմությունը 1,5 աստիճանով բարձր է մարդու մարմնի ջերմաստիճանից) ձիավորի ոտքերի մկանների և փոքր կոնքի օրգանների համար և ակտիվացնում են այստեղ արյան շրջանառությունը: Քայլքի ժամանակ ձին կատարում է 110 տեսակի տարբեր ուղղության տատանողական շարժումներ, որոնք հաղորդվում են ձիավորին: Ճիշտ կեցվածքը պահպանելու համար ներգործվում է հավասարակշռությունը և կոորդինացվում են շարժումները: Մանկական ուղեղային կաթվածով հի-

վանդների մոտ հենց այս պատճառով սկսում են աշխատել այն մկանները, որոնք առօրյա կյանքում անգործության են մատնված: Հիպոթերապիան կիրառվում է նյարդաբանական և այլ խանգարումների, օրինակ՝ աուտիզմի, ուղեղային կաթվածի, հոդատապի, ցրված սկլերոզի, գանգուղեղային վնասվածքների, ողնուղեղի վնասվածքների, վարքային և հոգեկան խանգարումների դեպքում»[5]:

Եզրահանգում

Այսպիսով՝ Կոմիտաս վարդապետի մանկական երգերի աներևակայելի աշխարհը կարելի է քննել ամենատարբեր գիտակարգերի սահմաններում, ինչպես նաև՝ համեմատել շիրակյան նմանաբնույթ ստեղծագործությունների հետ: Հոդվածում քննության առնված ստեղծագործությունների ընդհանրություններն ակնհայտ են. երկու դեպքում էլ կերպավորված ձին խորհրդանշում է քնարական հերոսի երազանքներն ու ձգտումները: Իսկ տարբեր գիտակարգերի սահմաններում քննելով բերված կերպարը, համոզվում ենք, որ կարմիր ձիու/հրեղեն նժույգի կերպարը խորապես ազգային հիմքեր ունի. այն դրսևորվել է ոչ միայն ժողովրդական հեքիաթներում, էպոսում ու ազգային մանկական երգերում, այլև մինչ օրս կենցաղավարում է Շիրակ աշխարհում:

ARTISTIC PERCEPTION OF THE IMAGE OF A HORSE IN CHILDREN'S SONGS

(in comparison with samples recorded in Shirak)¹

Matikyan Hasmik

*Shirak Center for Armenological Studies NAS RA,
State University of Shirak
PhD in Philology*

Vardanyan Armanush

Social and Cultural Center of Azatan, Armenia

Meliksetyan Aregnaz

Shirak Center for Armenological Studies NAS RA

The article studies the artistic perception of the image of a horse in children's songs. In the context of our research we have shed a light on Komitas's recording "The Wooden Horse", which we compared with the widely used children's nursery rhyme in Shirak "Horse, horse, wooden horse". We noted the features of the image of the horse in two works by highlighting the symbolic meaning meaning of the horse. The comparative study is based on the image of the fiery horse that emerged from the Explosive Spring in the novel "Call of the Ploughmen" by H. Dashtenets.

¹ The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project №22YR-6B030.

ХУДОЖЕСТВЕННОЕ ВОСПРИЯТИЕ ОБРАЗА ЛОШАДИ В ДЕТСКИХ ПЕСНЯХ

(в сравнении с образцами записанными в Шираке)

Асмик Матикян

канд. филол. н.

Ширакский центр арменоведческих исследований НАН РА,

Ширакский государственный университет, Армения

Армануш Варданян

Спортивно-культурный центр Азатана, Армения

Арегназ Меликсетян

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Армения

В статье обратились к художественному восприятию образа лошади в детских песнях, в области исследования есть также авторские произведения.

В центре внимания произведение Комитаса “Деревянная лошадка”, которое мы сравнили с широко распространенным в Шираке детским стихотворением “Лошадь, лошадь, деревянная лошадь”. Отметим особенности образа лошади в двух произведениях как героя, выделили роль символа лошади в Шираке, сравнив с образом огненного коня, вышедшего из Взрывного родника в романе “Зов пахарей” Х. Даштенца.

Цель исследования - выяснить общности и отличия образов животных, подчеркивая их смысл, встречающихся в произведениях Комитаса и распространенных в детских стихотворениях Ширака.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1976:

2. Դաշտենց Խ., Ռանչպարների կանչը, Սովետական գրող հրատ., Երևան, 1984:

3. Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտություն, Ոստմնասիրություններ և յօդուածներ, Գիրք Ա, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2013:

4. <https://komitasmuseum.am/about-komitas/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b8%d5%ac%d5%b8%d6%80%d5%bf%d5%b6%d5%a5%d6%80/>

5. https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%80%D5%AB%D5%BA%D5%B8%D5%A9%D5%A5%D6%80%D5%A1%D5%BA%D5%AB%D5%A1?fbclid=IwAR050NgTHIj_9pNpN08ze3PMBHG6cjR2---lZMZoht5R6UfYZ5c-BgYqEmo

6. <https://sateniksimonyan3.wordpress.com/2019/09/13/%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD-%D6%83%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A5-%D5%B1%D5%AB%D5%B8%D6%82%D5%AF/>

ՈՂԲԵՐԳԵՐԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Հասմիկ Հարությունյան
արվ.թ.

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիրական հետազոտությունների
կենտրոն, Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ, Հայաստան*

Նախաբան. Ողբերգերը իրավամբ կարելի է դասել ծիսական երաժշտական սիմվոլիզմի դրսևորումներին: Այն պարունակում է անցյալի փորձով ամրագրված ողբերգական հույզերի ավանդական մարմնավորում»: Ողբական արարողության ընթացքում ինտոնացիոն լացը կատարում է ամենակարևոր հոգեբանական գործառույթը. տեքստի հետ հնչյունը, ինչպես նշում են իրենք՝ ժողովրդական կատարողները, հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց վիշտը, մինչդեռ սովորական անխոս լացը միայն հուզում է հոգին, չտալով լիարժեք անցում դեպի բարդ, դժվարասելի զգացմունքներ: Բացի այդ, լացը թույլ է տալիս ընդհանուր դարձնել կորուսյալի անձնական վիշտը, այն կիսել բոլոր ներկաների հետ և այս կերպ մեղմել այն:

Ժողովրդական ավանդույթում ողբերգը ծիսական համալիրի գրեթե հիմնական երաժշտական բովանդակությունն է և ուղեկցում է թաղման ողջ ընթացքը՝ կարևորելով նրա ամենանշանակալի պահերը: Սովորության համաձայն՝ ողբը կատարում են կանայք: Սակայն թաղմանը ոչ բոլորն են «ձայն տալիս», այլ միայն հարազատներն ու մտերիմները: Պատահում է, որ անձանոթներն էլ են գալիս հանգուցյալին ողբալու: Սրանք ամենատաղանդավոր սգավորներն են, որոնք գիտեն լացին հատուկ գեղարվեստական ուժ հաղորդել և տիպական տեքստերով ողբեր ասել:

Անդրադառնանք ծեսի ակունքներին: «Մշակութային հնագույն շերտերի ընդերքում բազմակերպ դրսևորումներ ապրած հայոց երգ-երաժշտությունը դարերի ընթացքում փոխակերպումների է ենթարկվել: Այդ շերտերը գոյացել են գորել ծիսահավատալիքային համակարգերի հիմքի վրա՝ պայմանավորելով արվեստի անտարանջատ կամ միաձուլ կերպը: Դրանց մեջ երաժշտության, որպես օրգանական բաղադրատարրի գործառնության առանձնահատկությունների երևակումը հայ երաժշտական պատմագիտության առաջնային խնդիրների մեջ էական տեղ է զբաղեցրել: Պեղածո նվագարանների ժամանակագրական տվյալների և հայ ազգային մոտոդիայի տիպաբանության խնդիրների համատեքստում քննության առնված մի շարք կարևոր դրույթներ՝ մատենագրական տվյալների բաղդատությամբ, համեմատական լուրջ եզրեր են առաջ բերել»: [2, էջ 184] Հայ պատմագրությունն այստեղ առաջադրում է կոնկրետ փաստեր՝ լուրջ հիմքեր նախապատրաստելով երաժշտապատմական դիտարկումների համար: Թեև գրառումները պատկանում են վաղ միջնադարին, սակայն ներկայացված փաստագրական Ողբերգի ժանրային մինյութը վերծանելի է տարբեր դիտակետերից և երբեմն հնարավորություն է տալիս նշմարելու դեռևս

բնապաշտական ծիսապաշտամունքային ինչ-ինչ դրսևորումներ: Երաժշտության ծիսական բնորոշիչները յուրովի են դրսևորվել հայոց հինավուրց հուղարկավորության կամ ողբական արարողության մեջ: Այդ բնորոշիչները ներկայացել են տարբեր ոլորտներում՝ պարերում, պարերգերում, երգերում: «Չնայած անտարբանջատ բնույթին, երաժշտությունը որպես յուրօրինակ հնչյունակերտ տարր ներկայացել է յուրովի: Արմատներով խորանալով հայ մշակույթի հիմնավուրց շերտերի մեջ, իր խիստ ավանդականությամբ, ծիսական այս համակարգը պահպանել է ոչ միայն իր կենսունակությունը,

այլև ժամանակի ընթացքում խթանել է նոր՝ վիպական դրամատիկական մշակույթի զարգացումը»։ [3, էջ 16-17]

Հայ պատմիչների հիշատակություններում ողբական արարողությունը ծիսականացնում են **ձայնարկուները** և **գուսանները**։ Սրանք հմուտ պրոֆեսիոնալ կատարողներ էին, և, հետևաբար, ծիսական յուրաքանչյուր բաղադրիչ կրում էր մասնագիտացված հղկվածություն։ Հետևաբար, ծեսի շրջանակներում պետք է զարգանար նաև մասնագիտացված արվեստ։ Այս առումով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Փավստոս Բուզանդի հիշատակության մեջ նշված **ի ձայն ողբոցն** և **ձայնիսք մրմնջոցն** արտահայտությունները։ Սա այն հայտնի դրվագն է, որտեղ մանրամասն նկարագրված են իշխան Գնելի սպանությունը և հուղարկավորությունը, և որտեղ ասվում է, որ ձայնարկուները տեղում հորինել և կատարել են ծավալուն մի ողբերգ՝ նվիրված այդ չարաբաստիկ սպանությանը։ [6, էջ 268] Ուշագրավ է հատկապես **մայր ողբոցն** բառակապակցությունը, որն ամենայն հավանականությամբ վերաբերել է սգո արարողության գլխավոր մասնակցին և կազմակերպողին։ Նրան են միացել ձայնարկուները։

Եթե բանագիտության մեջ հինավուրց ծեսի ու ծիսական երգերի բովանդակության կամ խոսքային բանաձևերի ու գրական հիմքի մասին ինչ-ինչ պատկերացումներ կազմվել են, ապա դրանց երաժշտական բաղադրիչը մնում է անհայտ ու անմեկնելի։ Ավելի ուշ ժամանակաշրջանների նմուշները ներկայանում են ժողովրդական բանահյուսական նմուշների մեջ և հիմնականում կրում են բանավոր ավանդույթի կարևոր բնորոշիչներ։ Մ.Բրուսյանի դիպուկ բնութագրմամբ. «Ողբերն իրենց թեմատիկայով կարող են աղերսվել ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրերի հետ։ Օրինակ՝ ողբերգերը մոտ են դյուցազներգերին, երբ մեռնողը

Ժողովրդական հերոս է և արժանի է գովքի, իսկ օրորներին՝ այն դեպքում, երբ մեռնողը երեխա է, և արվում է երեխային համապատասխանող ողբ-գովեստ: Ողբերն իրենց բանաստեղծական որոշ պատկերներով կարող են աղերսվել նաև պանդխտության ու պատմական երգերին, նույնիսկ հարսանեկան երգի ժանրին, լալիքին: Ողբերը չունեն կոնկրետ կառուցվածք և չեն ենթարկվում որևէ կոմպոզիցիոն օրենքի: Կառուցվածքային ազատությունը բխում է ողբերին բնորոշ անկանոն պատմողականությունից, քանի որ ողբացողը վշտից խելակորույս, արտահայտում է երբեմն մեկը մյուսի հետ կապ չունեցող մտքեր. դրանք բորբոքվում են հատկապես ցավակցելու համար եկողների երևալով, որոնցից յուրաքանչյուրը ողբացողի մեջ արթնացնում է մի նոր հիշողություն, որը և նա սկսում է անմիջապես պատմել»: [1, էջ 136]

Ակներև է ողբերգի ժանրային ներքին բազմազանությունը, այն է՝ ողբական արարողության կայուն բաղադրիչների մեջ այլ ժանրերի հետ աղերսները: Դրանցից առավել կայուն են դյուցազներգերի, պատմական և պանդխտության երգերի, ինչպես նաև օրորների հորինվածքային կամ արտահայտչական տարրերը: «Ողբասացներն այցելությունն պատմում են պատահած դժբախտության, նրան մահից խլելու մերձավորների ջանքերի, նրա փոխարեն մեռնելու պատրաստակամության մասին, բացահայտում են իրենց ապրումները նրա մահվան կապակցությամբ, անիծում մահվան պատճառը, բնութագրում հանգուցյալի կիսատ թողած գործերը, անկատար երազները և գովում նրա արտաքին ու ներքին բարեմասնությունները: Իբրև կայուն բնորոշիչ ողբերգերի մեջ վիպականության դրսևորումներին՝ նրանք միսիթարողներին պատասխանում են իրենց վշտի անփարատելիության փաստարկներով, հորդորում վախճանվածին հանգիստ ու անքն ուղևորել այն աշ-

խաբիը [...] և իր ետևից մարդ չտանել, իսկ եթե դա անխուսափելի է, տանել որևէ անհույս հիվանդի կամ ծերի: Մերթ կրկին հանդիպելու հույս են հայտնում, մերթ ընդմիջտ բաժանվելու հուսահատություն»: [3, էջ 168-169]

Կոմիտասը հայ գեղջուկ երգի տեսակների երրորդ խմբում՝ պատմական երգերի մեջ առանձնացնում է վիպասանականն ու հերոսական մահերգը, և դրանք դասում է ամենաբարդ երգերի շարքին. «Տեսական եւ դիմացկուն են շինական, ծիսական, վիպական, վիպաքնարական, անտունի եղանակները, որոնք դարերով եւ ամուր կապուած են ժողովրդական սովորութիւնների եւ աւանդութիւնների հետ: Բայց, որովհետեւ բարդ են, գիղացիներից շատին անմատչելի են: Այժմ իմացողներին մատով են ցոյց տալի: Սովորութիւնների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում:

Վիպականը բարդ է, որովհետեւ անբաժան է եւ վէպը եղանակից: Պատմական վիպաքնարականը թէպէտ պարզ եղանակ ունի, բայց երկար պատմերգութիւն է»: [3, էջ 254] ԱհաՎասիկ, Ակնհայտ են ողբական արարողության կայուն բաղադրիչների մեջ այլ ժանրերի հետ աղերսները: Դրանցից առավել կայուն են դյուցազներգերի, պատմական և պանդխտության երգերի, ինչպէս նաև օրորների հորինվածքային կամ արտահայտչական տարրերը:

Նկատի առնելով ժանրի կայուն բնորոշիչները, փորձել ենք դիտարկել ողբերգերի արդի դրսևորումնրը, որոնք կենցաղավարում են Շիրակի մարզում: Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում: Հիմնվել ենք 2015-2021թթ. ՀՀ ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի երաժշտագիտական խմբի կողմից իրականացրած ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա: Այս երգերի մի մեծ խումբը պետք է դիտարկել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, որպես ինքնատիպ ժառանգություն՝ դրանք մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախապիրված ժանրերը:

Շիրակի արդի բանահյուսության մեջ այսօր կան երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նոր նմուշներ: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն են: Կարևոր է այն, որ այդ երգերը, ստեղծվելով համայնքային միջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական նմուշներ: Այստեղ մենք անդրադարձել ենք այն ողբերգերին, որոնք նախապես ընտրվում կամ հատուկ հորինվում և նաև կատարվում են **ողբասացների** կողմից: Կարևորել ենք այն, որ Շիրակի մարզի բազմաթիվ գյուղական համայնքներում կան ողբասացներ, որոնք մասնակցում են ողբական արարողություններին՝ հատուկ հորինված կամ ընտրված երգերի կատարումներով:

Բովանդակության շրջանակները բավական լայն են. «Սգի հրավեր, ննջեցյալի գովք, մահվան հանգամանքների նկարագրություն, մահվան առաջ բերած վշտի մեծության պատկերում: Սգում են պանդխտության մեջ մեռած հարազատին կամ հյուսված են նրա անունից: Ամենահուզիչ հատվածները ներկայացնում են թաղումից որոշ ժամանակ անց գերեզման այցելած մոր երկխոսությունը մեռած որդու հետ, ընդհանուր բնույթի սգերգ, որ հնարավոր է երգել յուրաքանչյուր հարազատի մահվան դեպքում»: [4, էջ 42]

Անշուշտ, սգո երգերի մեջ պահպանվել են ավանդաբար՝ սերնդեսերունդ փոխանցվածները: Դրանք վերաբերում են 20-րդ դարասկզբի պատմական իրադարձություններին և հատկապես 1918-1920-ականներին թուրքական զինակալման ընթացքում Շիրակի գավառի ազգաբնակչության կրած ողբերգություններին:

«Թուրքի ճամփեն» բավական տարածված երգ է և հորինված է աշուղական սիրավեպերի երգերի դարձվածքների ազդեցությամբ: Փոռուզիական քառալարի տոնիկայի հաճախակի կիրառումն ու փոքր սեկունդային քայլի վրա հիմնված հանգանքները ողբակատրության հիմնական կրողներն են:



Նույն պատմական իրադարձությունների մասին է «Տաճիկը Նոր ջուրն անցավ երգը.

Վարդի պես պահեցի,
Մինչև մարդ էրի,
Բարբարոս թուրքերին,
Տվեցի գերի,
Աման, վառվում եմ:

Մեծ թիվ են կազմում երգերը՝ գրված մահացածի անունից: Տիպական նմուշներից է

«Մասս բարով, կանաչ գարուն» երգը. ողբասացն է Լիզա Գուրգենի Մարգարյանը՝ ծնվ. 1935թ. Քարաբերդ գյուղում: Ունի ութամյա կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

3 Մը - նաա բա - թով կա - նաչ գա թուն, մը - նաա բա - թով բա - լա
6 ջան, հե - ռա - նա - թով ես ձե - գա - նից կիջ - նեմ խո - թունկ գե - թեզ - ման,
9 հե - ռա - նա - թով ես ձե - գա - նից մայ - բիկ ջան, կիջ - նեմ խո - թունկ գե - թեզ - ման:
12 Հան - կար - ծա - կի հի - վան - դա - ցա, գոս - սի - տա - թում պառ - կե - ցա, ե - կեր, տե - սեր ազգ
14 բա - թե - կամ, որ ես կիջ - նեմ գե - թեզ - ման, գե - թեզ - մա - նիս բա - թի վր - բա
16 ծա - դիկ ցա - նիր մա - մա ջան, ծա - դիկ ցա - նիր ար - ցուեր
թա - վիր, ես ջա - հել եմ մա - մա ջան:

Գերիշխող ասերգային տարրերի կողքին նկատելի են ժողովրդական այլ ժանրերի՝ քնարական, պատմական երգերին բնորոշ դարձվածքներ: Երաժշտաարտահայտչական առանձնահատկությունների մեջ ընդհանուր են փոքր ձայնածավալը, տոնիկայի զգալի ներկայությունը՝ օժանդակ հենակետի զգալի ներգործության պայմաններում, որը նպաստում է երգի բովանդակային-հուզական նկարագրի ամբողջացմանը:

Ընդհանուր առմամբ, ողբասացները, հմտորեն վերցնելով ողբերգերի ավանդական արտահայտչամիջոցները, կարողացել են

ազատ ստեղծագործել իրենց կարողությունների և երևակայության սահմաններում:

Եզրահանգում. Մեր կողմից հավաքված նյութը ցույց է տալիս, որ ավանդական ողբերգերի ծիսական գործառույթից բխող կայուն ժանրային բնորոշիչներ, որոնք որպես հորինվածքային կարևորագույն բաղադրիչներ, պահպանվել են նաև այսօր: Իբրև կայուն հորինվածքային մեխանիզմներ՝ այդ բաղադրիչները անվնաս են պահում բանահյուսական հորինվածքային ավանդական համալիրը՝ հնարավորություն տալով զգալու անհիշելի ժամանակներից մեզ հասած սգո երգերի ծիսական արտահայտչականությունը: Հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում թեև փոփոխվել է, սակայն ծիսական կարևոր տարրեր փոխակերպվել ու յուրովի են արտահայտվել: Սա բանահյուսական երգաստեղծության շարունակական գոյատևման գրավականներից մեկն է:

Զեկուցումը նվիրված է Շիրակի մարզում տարածում գտած ողբերգերին, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում ժողովրդական երաժշտական ստեղծագործության բավական բարդ այս ժանրի արդի դրսևորումների ուսումնասիրության գործում: Նկատի առնելով այն իրողությունը, որ ժամանակի հոլովությամբ առավել տուժել է վիպական բանահյուսությունը, հետևաբար սգո երգերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում հենց վիպականության տարրերի ու բնորոշիչների շնորհիվ:

Հիմնվելով Շիրակի տարածաշրջանում ներկայումս պարբերաբար իրականացվող բանահավաքչական աշխատանքների արդյունքների վրա՝ կարող ենք նշել, որ ողբական արարողությունն ու դրան ուղեկցող սգո երգերը Շիրակի տարածաշրջանում ոչ միայն

պահպանել են իրենց ծիսական գործառույթները, այլև համատեքստի շնորհիվ բազմազան են դարձել:

Մեր կողմից հավաքված նյութը ցույց է տալիս, որ ավանդական ողբերգերի ծիսական գործառույթից բխող կայուն ժանրային բնորոշիչներ, որոնք որպես հորինվածքային կարևորագույն բաղադրիչներ, պահպանվել են նաև այսօր: Իբրև կայուն հորինվածքային մեխանիզմներ՝ այդ բաղադրիչները անվնաս են պահում բանահյուսական հորինվածքային ավանդական համալիրը՝ հնարավորություն տալով զգալու անհիշելի ժամանակներից մեզ հասած սգո երգերի ծիսական արտահայտչականությունը: Հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում թեև փոփոխվել է, սակայն ծիսական կարևոր տարրեր փոխակերպվել ու յուրովի են արտահայտվել: Սա բանահյուսական երգաստեղծության շարունակական գոյատևման գրավականներից մեկն է:

Բանալի բառեր՝ *ողբերգ, ժողովրդական սրեղծագործություն, Շիրակ, ավանդույթ, սրեղծագործական մեխանիզմներ*

MODERN MANIFESTATIONS OF SONGS OF LAMENT IN SHIRAK REGION

Hasmik Harutyunyan

PhD in Art Studies

Shirak Centre for Armenological Studies of NAS RA

Yerevan State Conservatory GB, Armenia

Based on the results of the collection works currently carried out regularly in the Shirak region, we can note that the mourning ceremony and accompanying mourning songs in the Shirak region not only preserved their ritual functions, but also became richer and more diverse due to the context.

The material collected by us shows that the stable genre characteristics derived from the ritual function of traditional tragedies, which are the most important fictional components, have been preserved even today. As stable compositional mechanisms, these components keep intact the traditional complex of folkloric composition, giving the opportunity to experience the ritual expressiveness of mourning songs that have come down to us from time immemorial. Although the ancient Armenian mourning ceremony has changed over time, important ritual elements have been transformed and expressed in their own way. This is one of the keys to the continued survival of folklore songwriting.

Key words: *lamentation songs, folk creativity, Shirak, tradition, creative mechanisms.*

СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ СКОРБНЫХ ПЕСЕН В ШИРАКЕ

Асмик Арутюнян

К. ИССК.

*Ширакский центр арменоведческих исследований НАН РА,
Гюмрийский филиал Ереванской государственной консерватории
имени Комитаса, Армения*

Доклад посвящен скорбным песням, распространённым в Ширакской области, которые представляют большой интерес для изучения современных проявлений этого достаточно сложного жанра народной музыки. Учитывая тот факт, что эпический фольклор наиболее пострадал с течением времени, поэтому скорбные песни представляют большой интерес благодаря элементам и особенностям эпичности.

По результатам собирательных работ, регулярно проводимых в настоящее время в Ширакской области, можно отметить, что траурный обряд и сопровождающие его скорбные песни в Ширакской

области не только сохранили свои ритуальные функции, но и стали разнообразнее за счет контекста.

Собранный нами материал показывает, что устойчивые жанровые характеристики, вытекающие из ритуальной функции традиционных скорбных песнопений, являющихся важнейшими художественными компонентами, сохраняются и в наши дни. Являясь устойчивыми композиционными механизмами, эти компоненты сохраняют в неприкосновенности традиционный комплекс фольклорной композиции, давая возможность ощутить ритуальную выразительность траурных песен, дошедших до нас из глубины веков. Хотя древний армянский траурный обряд со временем менялся, важные ритуальные элементы трансформировались и выражались по-своему. Это один из ключей к дальнейшему выживанию фольклорного песенного творчества.

Ключевые слова: скорбная песня, народное творчество, Ширак, традиция, творческие механизмы.

References

1. Brutyan M. *Armenian folk musical composition* [Hay zhoghovrdakan yerazhshtakan steghtsagortsut'yun]. Yerevan. "Amrots grup" publ., 2014. 256 p. (in Armenian).
2. Harutyunyan H. *On several features of the genre of lament* [Voghbergi zhanrayin mi kani arrandznahatkutyunneri shurj]. «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2022, v. 1(25), pp. 19-29. (in Armenian).
3. Harutyunyan H. *Music of the V-XV centuries. in Armenian bibliography* [Yerazhshtutyuny V- XV dd. hay matenagrutyany mej]. Yerevan. "Gitutyun" publ.. 2010. 210 p. (in Armenian).
4. Harutyunyan E. *Armenian folk lament songs* [Hay zhoghovrdakan sgo yerger] // "Armenian Ethnography and Folklore", vol. 24, Yerevan, 2007. "Gitutyun" publ., 222 p. (in Armenian).

5. Komitas *Armenian Folk Music, Studies and Articles* [Hay geghjuk yerazhshtutiwn, Usumnasirutyunner yev hoduatsner]. Book A. Yerevan. “Hayastan” publ., 2005. p. 331. (in Armenian).
6. Pavstos Buzand *Armenian History* [Patmutyun hayots]. Yerevan. “Hayastan” publ., 1968. 354 p. (in Armenian).

**ON THE (UN) TRANSLATABILITY
OF FOLKLORIC ELEMENTS:
FIVE ENGLISH VERSIONS OF MIHAI EMINESCU’S
“FĂȚ-FRUMOS DIN LACRIMĂ”**

Daniela Hăisan

PhD in Philology

“Ștefan cel Mare” University of Suceava, Romania

Folklore, much like humour, usually travels badly. Among culturemes, folkloric elements stand out as most difficult to transpose from one language/culture to another. In the present paper we aim to discuss the question of (un) translatability of folkloric elements from Romanian to English. Our corpus is made up of a fairy-tale which Mihai Eminescu (1850-1889) published in 1870, and five English translations issued between 1991 and 2021. Unanimously cherished as a poet laureate in both Romania and Moldova, and unequivocally labelled as a Romantic, Eminescu drew heavily on folklore, especially during his so-called “Viennese period” (1869-1872), which genetic critics regard as pivotal in his literary career. While the exact origin of the tale is yet to be fully unveiled, the story as such has been profusely reedited and illustrated (mainly for children) and has occasionally been transposed into other languages, among which English continues to reign supreme. Our focus is on the extent to which the very title and four culturally-imbued other terms (i.e. *doină*, *horă*, *năframă*, *Muma Pădurilor*) resist translation in the English versions under consideration (1991, 1997, 2007, 2019, 2021).

Introduction

The present paper aims to look into the way a series of culture-bound terms (mainly of folkloric extraction) have been dealt with in translation.

Our case in point is a fairy-tale written by Romanian national poet Mihai Eminescu (*Făt-Frumos din Lacrimă*, 1870), which we will contrast with five English versions published between 1991 and 2021, mainly for children.

At the crossroads of Translation Studies, children's literature, and folklore, our analysis naturally draws on folktale scholarship (e.g. Propp (1968[1927]), Lüthi (1986[1947]), Bettelheim (1976) etc.), Romanian folklore research (see Costin (2018), studies on translated children's literature and on Eminescu (far too numerous to mention) – all of which having been a valuable source of enlightenment. Since our main research objective has to do with the extent to which five culturally-imbued terms resist translation in the English versions under consideration, the theoretical perspective takes into account Vlahov and Florin's 1970 as well as Baker's 1992 standpoints on translating *realia*. As for Eminescu in translation, it has been dealt with recently by Bot (2011), Lionte (2019), Martin, Moraru, and Terian (2018), and Volceanov (2015), among others, who, however, focus largely on Eminescu's poetry rather than prose. By choosing to deal with Eminescu's prose instead (a minor genre like the fairy-tale), our paper aspires to fill a gap in Eminescology, while at the same time contributing to the ever-expanding field of Translation Studies.

Although the name Mihai Eminescu is not likely to “ring an immediate bell for Anglophone readers”, it would certainly deserve to, “having circled the globe quite a few times” [22, n.p.]. Unanimously cherished as Romania's greatest poet, he was first translated into German (in 1881, by Carmen Sylva, the pen name of the Romanian queen Elizabeth), and then into English, French, Spanish, Portuguese, Italian, Hindi, Arabic, Hungarian, and Esperanto. There has been no shortage of English translators so far, as both academics (such as Petre Grimm, I. Olimpiu Ștefanovici-Svensk, Leon Levițchi, Andrei Bantaș, Ana Cartianu, Brenda

Walker) and (non-) professional translators (e.g. Sylvia Pankhurst, William Beatty-Kingston, Charles Upton-Clark, Kurt W. Treptow, Dimitrie Cuclin, Corneliu M. Popescu, Horia Florian Popescu, A. G. Sahlean) tried their hand at transposing Eminescu's linguistically seductive and deeply philosophical writings into English.

Born in 1850 in a family of minor landowners from Northern Romania, Mihail Eminovici (later Mihai Eminescu) spent his childhood and adolescence in the countryside and then studied in Vienna and Berlin, where he became acquainted with the works of Schopenhauer, Schiller, Kant, Descartes, Spinoza, as well as with Hindu Studies. His formative years conjugated with this Occidental experience would later turn Eminescu into a yet unparalleled Romanian poet. The richness and polyphony of his writings go well beyond Romanticism; yet, like any Romantic, he is especially noteworthy for his unsurpassed sense for "artistically refining folkloric elements, thereby paving the way for the best of what Romanian aesthetics would show the world" [22, n.p.], and *Făt-Frumos din Lacrimă* is quite possibly the most relevant of his texts in this respect. The contrastive approach we take to Eminescu's tale and its English translations will allow us to probe into Eminescu's (un)translatability.

The following abbreviations will be used throughout the text: ST [source text, i.e. the original, Romanian version of *Făt-Frumos din lacrimă*], TT1, 2, 3, 4, 5 [target text – the five English versions under debate here]. For reasons of space and for the fact that some of the texts in our corpus are digital (therefore pagination is not available), we chose not to use in-text citation for the corpus (entries 9-14 in the References). Unless otherwise stated, all back-translations between brackets are mine.

The Corpus

Our ST is, thus, Eminescu's *Făt-Frumos din Lacrimă* – a fairy-tale he published in 1870 in the literary magazine *Convorbiri literare*. The text is significant for having been the first prose text the poet submitted for publication, one that he wrote while he was going through a difficult, trial-and-error creativity spell (i.e. the beginning of the so-called “Viennese period” (1869-1872)). The great historian and literary critic Nicolae Iorga (1871-1940) regards *Făt-Frumos din Lacrimă* as a “juvaer în proză” [a jewel in prose] [8, p. 612]. The tale is equally relevant if scrutinized from the point of view of Genetic Criticism, since, as noted by Nicolae Ciobanu, it displays an exemplary image of the great nuclei of fantastic specificity which characterizes the whole of Eminescu's work [6, p. 14].

Făt-Frumos din Lacrimă, a fantastic story drawing loosely on the Orphic myth, testifies to Eminescu's desire to integrate Romanian folklore into Western culture. Its structure roughly corresponds the blueprint established by Vladimir Propp (1968[1927]).

In the opening sentences of the story we are told of an emperor's fifty-year long war with one of his neighbours. The neighbor happened to die in the meantime, but passed the hatred and enmity on to his descendants (sons and grandsons). As for the emperor, as he and his empress were childless, there was no one, at this point in the story at least, to whom he could pass this long-standing feud on. The much-lamented childlessness makes up a short yet significant episode which could easily correspond to Propp's first narrateme (*absentation*). A leitmotif of the Romanian folktale, this emperor-with-no-heir detail is, in effect, of particular significance in Eminescu's tale.

At some point, the empress despondently throws herself before a silver-clad icon of Mary, the Mother of God, and sips a tear which she spots running from the Mother's eye. As a consequence of this highly pious

gesture, she miraculously becomes pregnant and later gives birth to a boy “as white as milk foam”. The child’s name is so chosen by his mother as to clearly indicate his origin as both noble (“Făt-Frumos” [approx. Prince Charming]) and notable (“din lacrimă” [out of a tear]). Endowed with specifically exceptional powers and qualities (e.g. he grows in a month as much as others in a year, and is able to wield a heavy iron mace like no other), the young prince very soon decides to leave his parents (thus illustrating *departure*, the 11th narrateme in Propp’s list) and go fight (by himself) the army of the emperor who hated his father.

Dressed as a shepherd and carrying his mace (which he occasionally throws to the sky, to split the clouds) and two pipes (one for playing the *doina* – a traditional Romanian song – and the other for the *hora* – a traditional Romanian dance), he keeps walking until he reaches his destination. Instead of fighting the successor of the late emperor, he befriends him and decides to help him defeat “Muma Pădurii” [literally, the Forest’s Mother; approx. the Witch of the Forest], who had become a permanent threat to the latter’s kingdom. In the process, Prince Charming falls in love with the witch’s beautiful daughter (Ileana).

At his new friend’s request, after defeating the Witch of the Forest, Prince Charming goes on another quest (i.e. that of kidnapping the daughter of a man called “the Genar”, whom his friend wished to marry). This exploit proves much more difficult than the first. After two failed attempts to rescue the girl, Prince Charming ends up dead and turns into a stream, but he is brought back to life by God himself, entreated by St. Peter. After this hierophany, the protagonist continues to be aided by other characters, such as the King of Mosquitoes and the King of Crabs. He also meets some fantastic creatures (like the seven-headed tomcat or the horse with two hearts) and gains a series of magical items which prove instrumental in battle (e.g. a whetstone, a brush, a headkerchief).

Propp's 12th, 13th, 14th and 16th narratemes can thus easily be identified, only that they are clearly multiplied: *testing*– the hero being twice challenged to prove his heroic qualities; *reaction*–responding to the test; *acquisition*– getting magical objects and solutions; *struggle*– confrontating the villains). Ultimately, all the anti-heroes are defeated (Propp's 18th and 19th narratemes: *victory* and *resolution*, respectively), allowing Prince Charming to marry Ileana, as soon as his friend weds the daughter of the Genar.

In order to create this prose text, Eminescu ostensibly relies on a story from Western Romania, *Sfăt frumos crescut di lacrimă* [approx. the same as *Făt-Frumos din Lacrimă*], on which he transplants elements of his personal mythology. The result is a “fundamentally lyrical” tale [24, pp. 8-9], which may have been reedited countless times over the years as part of Romanian children's reading list, but, in reality, like most of kidlit and like most folktales¹, it has a dual addressee, having appealed to grown-ups as well (especially academics) for the last 153 years since publication. While it shares one-dimensionality, depthlessness, sharp style, synchretism, and sublimation with other European folktales, Eminescu's story is a literary wondertale by excellence. A master of portraiture and hypotyposis, the poet infuses the folktale with discreet Shakespearean touches (e.g. the Genar's daughter echoes scenes from *A Midsummer Night's Dream*) and suffuses it his own aquatic, deeply oneiric imagery. The great semantic, stylistic, and syntactic complexity of the tale, along with the numerous culturally-imbued terms, make it a difficult text to translate.

The English translations of *Făt-Frumos din Lacrimă* we are going to analyse have all been published between 1991 and 2021. They represent a

¹ See also Max Luthi: “The European folktale has a very special power. Not only the children of each new generation feel its attraction, but adults experience its magic again and again as well.” [19, p. 1]

selection of versions which appeared after the 1989 Revolution (therefore, after market liberalisation), with the main criterion for the selection being their availability (these versions being easily accessible online or in libraries) and variety (the English versions differ both stylistically and teleologically; their authors may be either professional or occasional translators). The TTs are chronologically listed in the table below:

Table 1. The Corpus

ST: Mihai Eminescu, “Făt-Frumos din lacrimă” (1870); the edition we consulted: “Făt-Frumos din lacrimă”, in <i>Proză</i> , Cartea Românească Educațional, Bucharest, pp. 7-23 (2019)				
TT1: <i>Prince</i> <i>Charming, the</i> <i>Tearbegotten</i> , e dited and translated by Ana Cartianu and R.C. Johnston, in <i>Selected</i> <i>works of Ion</i> <i>Creanga and</i> <i>Mihai</i> <i>Eminescu</i> , Boulder, Bucharest, Minerva, New York, Columbia University Press (1991)	TT2: <i>The Tear-Drop</i> <i>Prince</i> , transla ted by A.I. Marin, illustrated by Emil Childescu, Litera, Chișinău (1997)	TT3: <i>Prince</i> <i>Charming</i> <i>of a Tear</i> <i>Born</i> , translated by Dan Mateescu, in <i>Plural</i> n o. 30: 2, pp. 56-63 (2007)	TT4: <i>Prince</i> <i>Charming</i> <i>the Tear-</i> <i>Begotten</i> , translated by Ioan Giurgea, in <i>Poems</i> <i>and Prose of</i> <i>Mihai</i> <i>Eminescu</i> , The Center for Romanian Studies, Histria Books, Las Vegas, pp. 93-117 (2019[1990])	TT5: <i>Prince</i> <i>Charming from</i> <i>the Tear</i> , translated by Nicolae Sfetcu, in <i>Most</i> <i>Beautiful</i> <i>Romanian Fair</i> <i>y Tales</i> , vol. 1, online version (2021)

Culture-Bound Terms in Translation

Făt-Frumos din Lacrimă is not a folktale for nothing: besides the folkloric sources Eminescu relied on, and the typical folktale structure he adheres to, there are also a few dozen culture-bound terms which may pose particular translation problems. Besides *doină*, *horă*, *năframă*, which we will examine in what follows, other interesting examples are *borangic* (a kind of raw silk), *bădică* (a form of address typically used in the past for an older male), or the proper name *Genarul*, which may be associated with San Gennaro de Benevento, yet the translators find solutions as peculiar as they are diverse (e.g. TT1, Ana Cartianu, 1991: *Genario*; TT2, A. I. Marin, 1997: *the General*; TT3, Dan Mateescu, 2007: *January*; TT4, Ioan Giurgea, 2019: *the giant*).

in a group quite close to the men folk and begin to sing songs. They invariably begin with the ceremonial songs while the men folk perform the ritualistic aspect of the ceremony before their eyes. As soon as the ritual is over and men disperse, women switch over to the profane songs. This is the second part of their performance. The third and the last part of this composite performance includes dance by women. By the end of the performance, the sacred feeling attached to the ceremony is virtually over and women leave for their respective homes in a mood of mirth and hilarity talking and laughing loudly. Quite in tune with their performance, the functions performed by these folk songs are varied. Sometimes they — help in educating the young woman how to behave *properly*. Obviously the proper way of behaviour is conforming to the dictates of their culture. Songs like “*Ae bar pipa! katwaiye maṭnā charḍi gaū hatāiye maṭnā pāni mh daḷā bagāiye maṭna e beti gāl ḍivāiye matna*” (“O daughter, don’t get the sacred trees chopped, don’t shoo away a grazing cow, don’t throw pebbles in the ponds, thus don’t let us cursed”) are best suited in this regard. Some of the folk songs help in promoting a feeling of solidarity within the group or clan. Various fanciful exaggerations and compensatory mechanisms especially in marriage songs perform this function through songs like the following one: “*ye bhāiyan mh sirḍār bēte Harchand ke*” (“they, Harchand’s sons, are remarkable among their kin”). Thirdly these folk songs serve to validate or justify the existing institutions, beliefs and attitudes. The presence of a strong patriarchal order and low position of women is discernible in the following folk song: “*bin paṇi papaiyā ṭarsē dekhye o bin puṭṭar māṭā ṭarsē dekhye o tū dūjā byāh karvāle.*” (“See, the bird *papaiyā* pines for water, the woman pines for son; I beseech, you get remarried”) Sometimes these songs smoothen the social friction and dissatisfaction and ease the individual in her efforts to adjust herself into her setting and fate. Many a comforting and quietening song sung at the

time of farewell of a girl are remarkable in this context. See the following one: “*Yo ghar chhodyā bābal ṭerā mannē chhodi ṭeri dehlēriyān, nyū maṭ jāṇē e lādo mhāri ṭannē rākhān ānwan jāṇēriyān*” (“O father, I leave your home, your doorstep; O my darling daughter, don’t say so, we’ll keep on bringing you back here”). – They also act as means of applying social pressure and exercising social control: They warn the dissatisfied woman to be content with her lot, to accept the world as it is, and her place in it, and thus conform to the accepted patterns. In a song, the husband is about to leave home for some distant place and his wife urges him to send her to her parental home as her in-laws will not let her live in peace. But the husband forces her to stay back arguing that “*pihar maṭna jāiye rē gori sab ṭariyān muh kālā hogā . . . mere bāp kē kuṇbā bhāri ismēn ṭerā gujārā hogā*” (“Don’t go back to your natal home, it’ll bring disgrace to us . . . my father’s clan is big enough for your subsistence”). – Some radical songs serve as a vehicle of protest against patriarchy’s hegemony. They give vent to the female performer’s angst arising out of her realisation of the hardness of her routine chores, her subordinate position in her consanguine as well as affinal home, her isolation and loneliness, etc. the following song is remarkable in this regard: “*Bīr āpān mā ke jāye re he re āpān lōte ek sarir ke kismaṭ nāyri nyāri re*” (“O brother, we’re born of the same mother, we lay in the same womb, still our fates are so unlike”). Finally these songs sometimes permit action that is not usually approved of. The elaborate day-dreams and the exultant departures from the cultural ethic performed in these songs turn out to be compensations for satisfactions denied to women in the real world. Mark the following song: “*sās meri kā sir bhaṛkē sē naṇadi kē bukhār e, pati mere ki ankhiyān dukkhēn dīn sovē ni rāt e, tīnuvān nē katthe karke le chāli bazaar e, baṛke seḥr mh rukkā māryā le lyo saṣṭā māl e*” (“My mother-in-law has headache, my sister-in-law has fever, my husband has eyesores that make

him sleepless day and night; I gathered them together, took them to the bazaar, and immediately after entering the town, I hawked to sell them at cheap rates”).

If one believes that the soul of the people speaks out in the folklore, the Haryanvi women’s soul speaks through their profane and dance songs eloquently. These songs are among the very few spaces left almost unmediated by male hegemony in the Haryanvi culture. This is exclusively the only-women space where they are free to express themselves away from the male gaze. Surprisingly, the affinal relations are mocked at and criticised here even in the presence of their most hostile relations like the mother-in-law and the sister-in-law. Hardly anybody bothers to take the issue beyond its performance. This tacit understanding between the performer and the spectators indicate the existence of female bonding howsoever ephemeral it may be. The Haryanvi women thus manipulate their folksongs not only to describe the reality but also prescribe to the best of the liberty available to them the model way of life they want to have. Irrespective of their impact in daily life, these performances are the moments of illumination for the performers. And their significance lies in their presenting an alternative world view howsoever fragile or faint it may be.

Conclusion

Actually, folklore communication is highly allusive and complex owing to its culturally structured nature. In this regard, if compared with the folk songs of other sister-cultures like Rajasthani, Punjabi, Braj, Dogari, Gujarati, Bhojpuri, etc., Haryanvi women’s folk songs can lead to a better understanding of the context within which the customs and beliefs of these cultures get validity. These folk songs need to be compared also with other genres of Haryanvi folklore like folk tales, legends, myths, proverbs, etc. in order to get “a penetrating picture of their way of life” (Herskovits:

418). Hallowell is worth quoting here when he says: “I cannot help believing that the surface has hardly been scratched, and that much valuable material that would deepen our understanding of culture lies awaiting those who will systematically study oral narratives in relation to all aspects of a society” (Hallowell: 548).

Key Words: *Folkloristics, Haryanvi Women, Folk Song, North Indian Folklore, Folk Culture, Patriarchy.*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵԳԵՄՈՆԻԱ ԵՎ ԿՆՈՋ ԴԵՐԸ ՀԱՐՅԱՆՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Դեննդեր Կումար
բան.գիտ. դոկտոր

Բանասրահի համալսարան, Հնդկաստան

Մերօրյա ժամանակներում հաստատված իրողություն է, որ հայրիշխանությունը (պատրիարխատ) որպես պատմական և մշակութային սովորություն հեգեմոնիական միտումներ և ճնշումներ է գործադրում կնոջ՝ ամենախոցելի սուբյեկտի վրա: Բանահյուսությունը՝ որպես մշակույթի գործոններից մեկը, արձանագրում է հայրիշխանության հեգեմոնիական միտումները, կանանց դիմադրությունը դրանց դեմ: Այս համատեքստում Հարյանվի կանանց ժողովրդական երգերին բնորոշ են բանտարկության և փախուստի պատկերներ՝ առաջադրելով համառ հայրիշխանական գերակայության մոդել, ինչպես նաև կանանց էգալիտարիզմական աշխարհի բաղձանքը: Այս ժողովրդական երգերում հաճախադեպ են պարբերաբար կրկնվող պատկերներն ու փոխաբերությունները՝ որպես անհնազանդության դրսևորումներ հայրիշխանության դեմ: Այլ կերպ ասած, Հարյանվի կանանց ժողովրդական երգերը մարմ-

նավորում են ենթամշակույթի էական հատված՝ ծաղկող Հարյանվիի գերիշխող մշակույթի ներսում և մշակույթից դուրս: Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել բնիկ Հարյանվի գյուղական ժողովրդական երգերի տեսակը՝ Ջակարին՝ իբրև կանանց ենթամշակույթի արտացոլանք Հարյանվի՝ թաքնված հայրիշխանական մշակույթի քողի տակ:

Բանալի բառեր՝ քանակաչափային, Հարյանվի կանայք, ժողովրդական երգ, հնդկական ֆոլկլոր, ժողովրդական մշակույթ, հայրապետություն:

КУЛЬТУРНАЯ ГЕГЕМОНИЯ И МЕНЯЮЩАЯСЯ РОЛЬ ЖЕНЩИН В ХАРИЙСКИХ НАРОДНЫХ ПЕСНЯХ

Девендер Кумар,

док. фил. н.

Университет Банараса, Индия

В наше время подтверждена реальность того, что патриархат как историческая и культурная практика оказывает гегемонистское воздействие и давление на женщин как наиболее уязвимый субъект. Фольклор как один из факторов культуры фиксирует гегемонистские тенденции патриархата, сопротивление женщин им. В этом контексте женские народные песни Харьянви характеризуются образами заключения и побега, предполагая модель стойкого патриархального превосходства, а также стремление к эгалитарному миру для женщин. В этих народных песнях часто встречаются повторяющиеся образы и метафоры, выражающие неповиновение патриархату. Другими словами, женские народные песни харианви воплощают собой важную часть субкультуры как внутри, так и за пределами доминирующей культуры харианви. Целью данной статьи является исследование коренного жанра сельской народной песни Харьянви,

Джакари, как отражение женской субкультуры в Харьяне, скрытой под маской снисходительной патриархальной культуры, которая незаметно обесценивает и преследует ее.

References

1. Dundes, Alan, ed. & int. *The Study of Folklore*. Englewood Cliffs, N. J.: Prantice-Hall, Inc., 1965.
2. Grierson, G. A. *Linguistic Survey of India* Vol. IX Part I (1916). Delhi: Motilal Banarasidass, 1968.
3. Hallowell, A. I., “Myth, Culture and Personality”, *American Anthropologist* Vol. 49 (1947): 533-549.
4. Herskovits, M. J. *Man and His Works*. New York, 1948.
5. Kumar, Devender. *Jakari: Haryanvi Mahilaon ke Sarv-Sulabh Lokgeet*. Varanasi, 2015.
6. Weiss, Richard, “Cultural Boundaries and Ethnographic Map”, *Folklore: Critical Concepts in Literary and Cultural Studies Vol. IV*, ed. Alan Dundes. London: Routledge, 2005: 139-155.

**«ՀՈԴԱԼԼՈ ԶԱՆ» ԶՈՒԳԵՐԳԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ**

Լուսինե Պետրոսյան

պ. գ. թ.

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիրական հեղափոխությունների կենտրոն,
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
Հայաստան*

Նախաբան. Հոդվածը գրելիս հիմնականում օգտագործվել են Վ. Սամվելյանի կազմած «Երգարան»-ը, Առածանին, Հին կտակարանը, բառարաններ (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը, Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ը, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը), «Мифы народов мира» հանրագիտարանը, շումեր-աքադական առասպելները, հնագիտական որոշ աշխատություններ և այլն: Հոդվածի բուն նպատակն է՝ ցույց տալ, որ «Հոդալլո ջան» ժողովրդական երգում գործ ունենք ոչ թե երիտասարդ գույգի միջև ընթացող պարզ երկխոսության հետ, այլ, որ դրանում հստակ հիշողություններ են պահպանվել հազարամյակներ առաջ գոյություն ունեցած մեր նախնիների հասարակական կառույցի մասին: Այն բաղկացած էր անասնապահներից՝ անձնավորումը Հոդալլո և հողագործներից՝ անձնավորումը Դալալո, այլ կերպ ասած հասարակության արական և իգական կեսերից: Հոդվածում դա հաստատվում է բերված պատմական, հնագիտական և բանագիտական-լեզվաբանական նյութի միջոցով: Ըստ այսմ, հոդվածը թե՛ արդիական է և թե՛ նորույթ է պարունակում:

**Հողալիո և Դալալիո կերպարների նախապիպերը
արտադրող-վերարտադրող տնտեսության արդյունք:**

Հայտնի է, որ մարդկանց հիմնական սնունդն ապահովողները նախապես եղել են որսորդությունն ու հավաքչությունը, որոնցից առաջինը՝ տղամարդկանց, իսկ երկրորդը՝ կանանց զբաղմունքն էր: Որսորդությունից ծագել է անասնապահությունը, իսկ հավաքչությունից՝ հողագործությունը: Բնականաբար, անասնապահության առաջացման մեջ առաջնային դեր վերապահված է եղել տղամարդկանց, իսկ հողագործության առաջացման մեջ՝ կանանց: Հին քարի դարի ուշ փուլի թաղումների հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդիկ սկսել էին համախմբվել սոցիալական նոր տիպի կազմակերպությունների մեջ: Արյունակից հարազատների արտամուսնական (էքսոգամ) կապի միջոցով ձևավորվող տոհմը աշխատանքի հասարակական բաժանման պահանջով դառնում էր Նախնադարի տնտեսական միավորման հիմնական բջիջը: [9, էջ 47] Մարդկությունը դրանով ոտք էր դրել տնտեսավարման նոր ձևի՝ արտադրող-վերարտադրող տնտեսության ոլորտ: Առաջավոր Ասիայի առանձին շրջաններում դեռևս Միջին քարի դարաշրջանում տեղի էր ունենում անցումը տնտեսության արտադրող-վերարտադրող ձևերին՝ անասնապահության և հողագործության: [9, էջ 57] Հայկական լեռնաշխարհում այդ գործընթացի վկայություններն են Չայոնյոյ հնավայրի (Հին Հայաստանի Անգեղտուն գավառի տարածքում) պեղումները: Անգեղտուն գավառը մասն է կազմել հողագործությանն ու անասնապահությանը սկիզբ դրած այն գոտու՝ այն «աղեղի», որը ձևավորում էին միասնության մեջ դիտված Հայկական (Արևելյան) Տավրոս և Զագրոս լեռնաշղթաները [10, էջ 7-10: 19, էջ 8-9]: Հայ-

կական լեռնաշխարհը հայրենիքն է համարվել ցորենի և գարու թե՛ վայրի և թե՛ մշակովի տեսակների: [23, էջ 88-120] Չայոնյուն եղել է մշակովի ցորենի ստացման օջախներից մեկը: Ուշագրավ է, որ պեղումների հետևանքով այստեղ հայտաբերված մշակովի ցորենի հատիկների թիվը հաշվվում է հազարներով, երբ գարեհատիկները հատուկենտ են՝ այն էլ վայրի տեսակի [8, էջ 33]: Չայոնյուի վերին (ուշ շրջանի) շերտերում ցորենհատիկների հետ միասին հանդիպում են շերտից շերտ ավելացող ոսպի, ոլոռի, վիկի մնացորդներ, որոնք խոսում են դրանց մշակովի դառնալու գործընթացի արագացման և հնավայրի բնակչության տնտեսության մեջ հողագործության գերակշռող դառնալու մասին: [13, էջ 164]

Չայոնյուի աստորին (վաղ շրջանի) շերտերի մեջ բացակայում են ընտանի կենդանիների ոսկորները: Եղածները վայրի տեսակների՝ որսի կենդանիների ոսկորներ են, ինչը խոսում է համայնքի կյանքում որսորդության ունեցած դեռևս կարևոր դերի մասին: Դրան հակառակ, վերին շերտերում այծերի և ոչխարների՝ մեծամասամբ ընտանի տեսակի ոսկորների քանակը 13 անգամ գերազանցում է ազնիվ եղջերվի և վայրի ցուլի ոսկորների ընդհանուր քանակին: [11, էջ 256-257] Այս փաստը վկայում է անասնապահության ունեցած նվաճումների մասին: Հավելումն ասվածի, նշենք, որ Չայոնյու հնավայրի աստորին շերտերց պեղված պղնձից և դահանակից (մալախիտ) պատրաստված մանր առարկաների թվագրումը ռադիոածխածնային մեթոդով ցույց է տալիս մ.թ.ա. 7250-6750 թթ.: [12, էջ 37]

**Հողալլո և Դալալլո անձնանունների և սրանց
նախադրիպերի մասին**

Մոտավորապես այս նույն թվագրումն (մ.թ.ա. VIII-VII հազարամյակներ) է պահանջում նաև Հողալլո և Դալալլո անձնանունների նախատիպերի առաջացման ժամանակաշրջանը: Բանն այն է, որ դրանց իմաստները սերտ կապի մեջ են ինչպես հողագործության և անասնապահության առաջացման, այնպես էլ վերջինների սոցիալական հիմքն ապահոված արտամուսնական ցեղի երկու՝ արական և իգական մասերը կազմող տոհմերի գոյության հետ: Մեր կարծիքով, Հողալլո անձնանվան և հայերեն *հօլաղ* բառի նախատիպը նույնն է եղել: Թեպետև վերջինը գրաբար տեքստերում բացակայում է, բայց թե նրա *հօլ* արմատն առկա է այդ տեքստերում վկայված մի շարք բառերում: [1, էջ 143] Հօլաղ (*հօլաղ*) բառի թե՛ *հօլ* արմատը և թե՛ նրա *աղ* վերջածանցը հայերենի բնիկ բառերից են: [3, էջ 138-139: 15, էջ 795]

Հօլաղ բառում *ղ*-ի գրաբարյան արտասանությունը նկատի առնելիս, հասկանալի է դառնում Հողալլո-ի մեջ գույգ լլ-ի առկայությունը, իսկ *լ/ղ* հնչյունափոխությունը հետին է՝ բարբառային, այնպես ինչպես վերջին *n* (ո) կոչականը (հանդիպում է նաև ժողովրդական այլ երգերում. Եղսո, Զուլո, Թելլո, Հակո, Սաթո և այլն): Մինչև XX դարի երեսնական թվականները *հօլաղ*-ը ամենագործածական բառերից էր: Այդպես էր կոչվում «մի տան ընտանի անասուններն արածացնող և խնամող հովիվը» [18, էջ 154], և «փոքրահասակ մշակը, որ նստում է գութանի գույգի (խորիկների) լծին և եզները քշում»: [18, էջ 154] Քանի որ գութանն ավելի ուշ է հայտնագործվել, հետևաբար, *հօլաղ*-ի և Հողալլո-ի նախատիպ բառն

առնչվելու էր արորով վար անողին՝ նրանց լծված կենդանիները «արածացնող և խնամող հովվին»:

Ինչպես վերևում տեսանք, տղային ուղղված աղջկա խոսքին (երգի առաջին տողը) երիտասարդը արձագանքում էր. «Աղջի՛կ սիրուն, աղջի՛կ անուշ, դալալլո»: Կարծում ենք, որ այս տողի *դալալլո* բառի փոխարեն նախապես եղել է *Դալարո՛ դալար* բառի կոչական ձևը: Այն *դալալլո* է դարձել *Հոդալլո*-ի վերջնամասի ազդեցությամբ: Ինչու՞ ենք կարծում, որ բառը նախապես եղել է *դալարո*: Մի պարզ պատճառով. *դալար* բառը իմաստային սերտ կապի մեջ է բուսականության հետ, իսկ բուսաշխարհի հետ գործ ունեցողները եղել են հավաքչությամբ, ապա նաև՝ հողագործությամբ զբաղվող կանայք: Սրանց ներկայացուցիչն է Դալարո/Դալալլոն; Գրաբարյան տեքստերում *դալար* նշանակում է «առոյգ և կանաչ. գուարճ», «խոտ, փայտ (իմա՝ «ծառ»- Լ.Պ.), գաւազան դալար», նաև «դալարի, խոտ, բանջար» [1, էջ 591]: *Դալար* (դալ-ար) բառի թե՛ արմատը և թե վերջածանցը բնիկ հայերեն են, ընդ որում, արմատն իր տարբերակներով առկա է հայերեն մի շարք բառերում [2, էջ 612, 616, 647, 649: 15, էջ 180, 800]:

Ձուգերգի այլևայլ զուգահեռներ

Հայկական առածներից մեկում հստակ գատորոշվում են մի կողմից տղա-հարս, մյուսից՝ աղջիկ-փեսա զույգերը: Ահա այն. «Գարնան արևը տղուս ու հարսիս վրա,/Աճնան արևը՝ փեսիս ու աղջկաս»: [14, էջ 261] Առաջին հայացքից այն տպավորությունը կարող է ստեղծվել, թե մոր օրինանքի առարկան առաջին հերթին իր տղան (և հարսը) է, ապա՝ աղջիկը (և փեսան): Բայց այս առածն ուրիշ շատ առածների նման գալիս է հազարամյակների խորքից և

ունի իր սոցիալ-տնտեսական հենքը: Գարունը այծերի և ոչխարների ծինի եղանակն է, իսկ աշունը՝ բերքահավաքի: Այս տեսանկյունից դիտարկելիս հասկանալի է դառնում, որ մայրը խտրություն չի դրել իր զավակների միջև՝ անասնապահ որդուն մաղթելով իր կենդանիների բարի աճ, իսկ դստերը՝ առատ բերք: հասկանալի է, որ գարնանային արևն է անասնապահին՝ տղամարդուն բարիք բերում, իսկ աշնան արևը՝ բուսաշխարհին առնչվող հողագործին՝ կնոջը:

Անասնապահության և հողագործության հովանավոր շումերական երկու աստվածություններ կային՝ Լախարը և Աշնանը: Սրանցից առաջինը սերտ կապ ուներ մանր եղջերավոր անասունների բուծման, իսկ երկրորդը՝ հացահատիկային բույսերի մշակման հետ: [4, էջ 312] Սրանց ստեղծել և երկիր էին ուղարկել գերագույն աստված Էնլիլը և սրա որդի՝ քաղաքակրթության հիմնադիր Էնկին (աքադերեն՝ Հայա): [7, էջ 662] Շնորհիվ սրանց մարդիկ ապահով ապրուստ ունեցան: Մի անգամ այս աստվածությունների միջև վեճ է ծագում, թե իրենցից ո՞րն է մարդկանց համար առավել պիտանի: Վեճին միջամտած Էնլիլն ու Էնկին հաղթող են ճանաչում հացահատիկային բույսերն անձնավորող Աշնանին [6, էջ 647-653] Դա հասկանալի է, որովհետև Միջագետքի հողագործ և նստակյաց բնակչության սննդի գլխավոր բաղադրիչը կազմում էին հացահատիկային բույսերը: Ընդ որում հարավային Միջագետքը՝ նախկին Շումերն ու Աքադը հայտնի էին ոչ միայն հացահատիկների մշակությամբ, այլև արտահանումով [21, էջ 73]:

Լախարի և Աշնանի վերաբերյալ գիտության մեջ գոյություն ունեն իրափամերժ կարծիքներ: Ուսումնասիրողների մեծամասնությունը այն կարծիքն է պաշտպանում, թե դրանք քույր աստվածություններ են եղել: [5, էջ 40] Մեզ առավել հավանական է թվում Ս. Ք-

րամերի կարծիքը, որ դրանցից Լախարը տղամարդ է: [17, 53-54] Ի դեպ, եթե Լախարը անասնապահ էր և այժ ու ոչխար էր բուծում, ուրեմն տղամարդ էր լինելու, որովհետև անասնապահությամբ, ինչպես նաև նրան ծնած որսորդությամբ զբաղվում էին տղամարդիկ: Ինչ վերաբերում է Լախարին և Աշնանին քույրեր համարող տեսակետին, ապա բացառված չէ, որ նման տեսակետ գոյություն է ունեցել դեռևս հնում և գալիս է Արուսյակ (Վեներա) մուրակի և այն անձնավորած Իսաննա (աքաղերեն՝ Իշտար) դիցուհու մասին գոյություն ունեցած առասպելաբանական պատկերացումներից: Մարդիկ նախապես կարծում էին, որ Լուսաբերը՝ Արուսյակը արևածագից առաջ և Գիշերավարը՝ Արուսյակը արևամուտից հետո տարբեր, բայց իրար շատ նման լուսատուներ են (Հայերեն *Լուսաբեր* և *Գիշերավար* անունները դրա վկայություններն են): Ըստ այսմ, նրանց անձնավորած դիցուհիներին շումերները համարել են քույրեր (ըստ երևույթին երկվորյակ), և նույնացրել անասնապահության ու հացահատիկների հովանավոր աստվածությունների հետ:

Աստվածաշնչում ևս կան անասնապահությամբ և հողագործությամբ զբաղված ավանդական դեմքեր: Դրանք Ադամի և Եվայի որդիներն էին՝ Կայենը և Աբելը [22, Ծանոթ, գլ. Դ, 1-10]: Ի տարբերություն շումերական առասպելի, սրանք (ըստ երևույթին երկվորյակ) եղբայրներ էին: Ըստ Աստվածաշնչի, մի անգամ նրանք նվիրաբերումներ են կատարել Եհովա աստծուն: Կայենը՝ հողի բարիքից, իսկ Աբելը՝ առաջնածին գառներից: Եհովան հաճությամբ ընդունել է անասնապահ Աբելի նվիրաբերումը, իսկ Կայենի նվիրաբերումը անտեսել էր [22, Ծանոթ, գլ. Դ, 3-5]: Թե ինչու՞ էր Եհովան դրանով իր սերը ցուցաբերել հենց անասնապահ Աբելի նկատմամբ, բացատրում է բիբլիագետ Ջենոն Կոսիդովսկին: Նա գրում է.

«Հին հրեաները այն ժամանակ (իմա՝ Պաղեստինում հաստատվելուց առաջ Լ.Պ) խաշնարածներ էին, այդ պատճառով էլ Աբելը, որ ոչխարի հոտ էր արածեցնում, նրանց ավանդության մեջ դառնում է Եհովայի սիրելին և հողագործ Կայենի անմեղ գոհը: Ի դեպ, արժե նշել, որ մարդկության զարգացման պատմության մեջ տեղի է ունեցել ճիշտ հակառակը. հենց քոչվորական ցեղերն են հարձակվել խաղաղասեր հողագործների վրա» [16, էջ 38]:

Ինչպես տեսնում ենք, հրեական ավանդության մեջ սպասված անասնապահ տղամարդ և հողագործ կին սոցիալ-տնտեսական հենքով զույգը փոխարինվել է զույգ տղամարդկանցով: Այս դեպքում ևս փոխարինումը պատճառաբանված էր լինելու: Անասնապահ և հողագործ զբաղմունքներ ունեցող զույգը զուտ արական սեռի մարդիկ կարող էին ներկայացվել միայն այն բանից հետո, երբ երևան եկավ ծանր արորը: Դրանով անասնապահ՝ կենդանի քաշող ուժ (օրինակ՝ եզ) ունեցող տղամարդուն կարևոր դեր հատկացվեց նաև հողագործություն-դաշտամշակության մեջ: Այդ դերը անփոխարինելի դարձավ գութանի երևան գալով: Կայենի և Աբելի ավանդությունը ավելի ուշ ժամանակների արգասիք է: Այն հետո է Աստվածաշնչի խմբագիրների կողմից տեղաշարժվել և հարմարեցվել առաջին մարդկանց դարաշրջանին: Իր զուգահեռ ավանդությունների նման, հրեական ավանդությանը ևս բնորոշ էր լինելու ոչ թե երկու տղամարդկանցից բաղկացած անասնապահ և հողագործ զույգը, այլ տղամարդ անասնապահ և կին հողագործ զույգը:

Եզրահանգում

1. Հայկական լեռնաշխարհում ամենավաղ թվագրում ունեցող (սկսած մ.թ.ա. 7250-6750թթ.) և արտադրող-վերարտադրող տնտե-

սություն վարած բնակավայրը եղել է պատմական Անգեղոտուն գավառում գտնված Չայոնյուն: 2. Մոտավորապես նույն ժամանակաշրջանով է թվագրվելու երիտասարդ գույգի երկխոսության արդյունք հանդիսացած «Հոդալլո ջան» ժողովրդական երգի առաջին երկու տողերի նախատիպի ստեղծումը: 3. Հոդալլո և Դալալլո անունների սոցիալ-պատմական հենքը եղել է արտադրող-վերաբրտադրող տնտեսության առաջացումը: Ըստ այդմ, երիտասարդ գույգի արական անդամը ներկայացնում է անասնապահությունը, իսկ իգական անդամը՝ բուսաշխարհը: 4. Նրանց անունների նախատիպից *hoypaղ* և *ղալար* բառերը ևս ապացույցն են նրանց միջև աշխատանքի նման բաժանման՝ անասնապահություն և հողագործություն: 5. Մեր գույգի սոցիալ-պատմական գուգահեռներն են ներկայացնում շումեր-աքադական Լախար ու Աշնան և հին հրեական Աբել ու Կայեն գույգերը, որոնց կերպարներում առկա են ավելի ուշ տեղի ունեցած մի այնպիսի երևույթ, ինչպիսին է տղամարդու մուտքը հողագործության բնագավառ:

Ամփոփում

Հոդվածի քննության առարկան «Հոդալլո ջան» ժողովրդական երգն է՝ ավելի ստույգ, նրա սկզբնամասը: Ժողովրդական այս երգի սոցիալ-տնտեսական հենքը բացահայտում են նրա առաջին և երկրորդ տողերը. «Հո՛դալլո ջա՛ն, հո՛դալլո ջա՛ն, հո՛դալլո,/Աղջի՛կ սրիոն, աղջի՛կ անուշ, դալալլո» [20, էջ 189]: Տպագիր տեքստում *հոդալլո* և *ղալալլո* բառերը փոքրատառով են բերված: Ըստ երևույթին, դա գալիս է երգն հաղորդողից, որը դրանք անհասկանալի բառեր է համարել: Հոդվածը գրվել է պատմահամեմատական մեթոդի կիրառումով, նյութերից են ինչպես հայկական ժողովրդական «Հոդալլո ջան» երգը և ասացվածքներից մեկը, այն-

պես էլ շումեր-աքադական առասպելաբանությունից հայտնի Լա-
խար և Աշնան աստվածությունների և հին հրեաների աստվա-
ծաշնչային եղբայրներ Աբելի ու Կայենի մասին ավանդազրույցը:
Հոդվածում մեր վերլուծության առարկան են դարձել երգի *հոդալ-
լո* և *դալալլո* բառերը, որոնք ծագում են այն նույն նախատիպերից,
ինչ *հոյաղ* և *դալար* բառերը: Հոդալլոյի և Դալալլոյի կերպար-
ներն իրենց գուգահեռներն ունեն առաջավորասիական այնպիսի
մշակույթներում, ինչպիսիք են շումեր-աքադականը և հին հրեա-
կանը: Մեր կարծիքով, *հոդալլո*-ն և *Դալալլո*-ն անձնանվանաբար
կիրառված հնագույն դասային անվանումների փոքր-ինչ ձևա-
փոխված հետնորդներն են: Հոդալլո-ն վերաբերում է անասնա-
պահությունը ներկայացնող երիտասարդ տղամարդուն, իսկ *Դա-
լալլո*-ն՝ բուսաշխարհը ներկայացնող և տղային դիմող աղջկան:

Բանալի բառեր՝ *հոդագործ, անասնապահ, հոյաղ, դալար, հասս-
րակություն, սոցիալ-դնարեսական, Լախար, Աշնան, Կայեն, Աբել:*

ON THE SOCIO-ECONOMIC BASIS OF THE DUET "HODALLO JAN"

Lusine Petrosyan

PhD in History

*Shirak Center for Armenological Studies NAS RA,
State University of Shirak, Armenia*

The subject of the article is the Armenian folk song "Hodallo jan", more
precisely the beginning of the song. The socio-economic basis of this folk
song is revealed by its first and second lines: "Hodallo jan, hodallo jan,
hodallo, / Pretty girl, sweet girl, dalallo". In the printed text, the words
hodallo and dalallo are written in lower case letters. Apparently, this
comes from the person who transmitted the song, to whom the meaning of

these words was not clear. The article is written by the historical-comparative method, the materials include the Armenian folk song "Hodallo jan" and one of the proverbs, as well as a myth about the famous Sumerian-Akkadian deities Lahar and Ashnan and the biblical legend about brothers Abel and Cain. The object of our analysis was the words of the song *hodallo* and *dalallo*, derived from the same prototype as the words *hotal/hotagh* «shepherd boy» and *dalar* «green». The characters of *Hodallo* and *Dalallo* have parallels in the other West Asian (Sumero-Akkadian and ancient Hebrew) cultures. In our opinion, *Hodallo* and *Dalallo* are slightly modified successors of ancient social estates names used as personal names. *Hodallo* refers to a young man representing pastoralism, and *Dalallo* refers to a girl representing the plant world.

Keywords: *cultivator, pastoralist, hotal/hotagh «shepherd», dalar «green», society, social-economic, Lahar, Ashnan, Cain, Abel.*

О СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ОСНОВЕ ДУЭТА «ХОДАЛЛО ДЖАН»

Лусине Петросян

К. ИСТ. Н.

*Ширакский центр арменоведческих исследований НАН РА,
Фонд «Ширакский государственный университет
имени М. Налбандяна, Армения*

Предметом статьи является армянская народная песня «Ходалло джан», точнее начало этой песни. Социально-экономическую основу этой народной песни раскрывают ее первая и вторая строки: «Ходалло джан, ходалло джан, ходалло, /Девушка красавица, девушка дорогая, далалло». В печатном тексте слова *ходалло* и *далалло* пишутся строчными буквами. Судя по всему, это исходит от человека, передавшую песню, которому не было понятно значение

этих слов. Статья написана историко-сравнительным методом, материалы включают армянскую народную песню «Ходалло джан» и одну из пословиц, а также миф о знаменитых шумеро-аккадских божествах Лахаре и Ашнани и библейскую легенду о братьях Авеле и Каине. Объектом нашего анализа стали слова песни *ходалло* и *далалло*, происходящие от тех же прототипов, что и слова *hotal/hotagh* «подпасок» и *dalar* «зеленый». Образы Ходалло и Далалло имеют параллели в других переднеазиатских (шумеро-аккадская и древнееврейская) культурах. По нашему мнению, *Ходалло* и *Далалло* являются слегка видоизмененными преемниками древних названий сословий, использовавшихся в качестве личных имен. *Ходалло* относится к молодому человеку, представляющему скотоводство, а *Далалло* относится к девушке, представляющей растительный мир.

Ключевые слова: *земледелец, скотовод, hotal/hotagh «подпасок», dalar «зеленый», общество, социально-экономический, Лахар, Ашнан, Каин, Абель.*

References

1. "A new vocabulary of the Armenian language" [Nor barrgirk' haykazean lezui]. Yerevan. YSU publ. H. II. 1979. 1140 p. (in Armenian).
2. Acharyan H. *Root dictionary of Armenian language* [Hayeren armatakan barraran]. Yerevan. YSU pub. H. I. 1971. 699 p. (in Armenian).
3. Acharyan H. *Root dictionary of Armenian language* [Hayeren armatakan barraran]. Yerevan. YSU pub. H. III. 1977. 635 p. (in Armenian).
4. Afanasyeva V. *Lahar and Ashnan* [Lakhar i Ashnan] // "Mythology". Moscow. "Scientific publ. Great Russian Encyclopedia". 2003. 312 p. (in Russian).
5. Afanasyeva V. *Lahar and Ashnan* [Lakhar i Ashnan] // "Myths of the nations of the world: Encyclopedia". Moscow. "Soviet encyclopedia" publ. 1980. Vol. II. p. 40. (in Russian).
6. Afanasyeva V. *Sumero-Akkadian mythology* [Shumero-akkadskaya mifologiya] // "Myths of the nations of the world: Encyclopedia". Moscow. "Soviet encyclopedia" publ. 1980. Vol. II. pp. 647-653. (in Russian).

7. Afanasyeva V. *Enki* [Enki] // "Myths of the nations of the world. Encyclopedia". Moscow. "Soviet encyclopedia" publ. 1980. Vol. II. p. 662. (in Russian).
8. "Archaeology of Foreign Asia" [Arkheologiya Zarubezhnoy Azii]. Bongard-Levin G. and others. Moscow. Higher school. 1986. 358 p. (in Russian).
9. Avdusin D. *Archeology of the USSR*. [SSHM hnagitut'yun]. Yerevan. YSU publ. 1981. 368 p. (in Armenian).
10. Braidwood R. *The Near East and Foundation for Civilization*//Oregon. Oregon State system of higher education. 1952. 45 p.
11. Braidwood R., Cambel H., Schirmer W. *Beginning of village-farming communities in Southeastern Turkey*. Çayönü Tepesi//1978 an 1979. «Journal of Field Archeology». Taylor & Francis, Ltd publ. 1981. Vol. VIII. N 3. pp. 249-258.
12. Braidwood R., Cambel H., Schirmer W. *The early village in Southwestern Asia*//»Journal of the Near Eastern Studies». Chicago. The University of Chicago press pub. 1973. Vol. 32. N 1-2. pp. 34-39.
13. Esayan S. *Archeology of Armenia. Stone Age - Late Bronze Age*. [Hayastani hnagitut'yun. K'ari dar – Ush Bronzi dar]. Yerevan. YSU publ. 1992. Series 1. 316 p. (in Armenian).
14. Ghanalanyan A. *Collection of proverbs*. [Arratsani]. Yerevan. ArmSSR AS publ. 1960. 397 p. (in Armenian).
15. Jahukyan G. *Armenian etymological dictionary* [Hayeren stugabanakan barraran]. Yerevan. "Asoghik" publ. 2010. 819 p. (in Armenian).
16. Kosidovski Z. *Biblical legends* [Bibliakan avandapatumner]. Yerevan. «Armenia» publ. 1970. 579 p. (in Armenian).
17. Kramer S. *Sumerian Mythology*. New York. Harper & Brothers pub. 1961. 130 p.
18. Malkhasyants St., *Armenian defining dictionary* [Hayeren bats'atrakan barraran]. H. III. Yerevan. State publ. 1944. 614 p. (in Armenian).
19. Martirosyan H. *Science begins in prehistoric times*. [Gitut'yunn sksvum e nakhnadarum] Yerevan. "Sovetakan grogh" publ. 1978. 205 p. (in Armenian).
20. «Song-book». [Yergaran] Yerevan. ArmStatePubl. 1949. 599 p. (in Armenian).
21. Struve V. *History of the ancient East* [Istoriya drevnego vostoka]. Moscow. "Gospolitizdat" publ. 1941. 482 p. (in Russian).

22. *The Holy Bible contains the Old and New Testaments* [Astuatsashunch' matean Hin yev Nor ktakaranats']. Y. Poyachean publ. Constantinople. 1883. 1006+302 p. (in Armenian).

23. Vavilov N. *Centers of origin of cultivated plants* [Tsentry proiskhozhdeniya kul'turnykh rasteniy] // "Selected Works". Moscow-Leningrad. 1926. Vol. V. pp. 88-120. (in Russian).

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՐԵՈՏԻՊԵՐԸ ՄԱՆԿԱԽԱՂԱՅ ԵՐԳԵՐՈՒՄ ՈՒ ԽԱՂԵՐԳԵՐՈՒՄ

Կարինե Սահակյան

հոգ. գիտ. թեկն., դոցենտ

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան, Հայաստան*

Ռոզա Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոն, Հայաստան

«Հայ օրորոցայինների, խաղերգերի ու մանկական երգերի գրառումը սկզբնավորվել է անցյալ դարի 19-րդ դարի 60-ական թվականներից: 1868 թ. Պետերբուրգում Միք. Միանսարյանցը հրատարակում է «Քնար հայկականն ժողովածուն, որտեղ հատուկ բաժին է հատկացվում օրորոցայիններին, որոնք կա՛մ հեղինակային, կա՛մ մշակված ստեղծագործություններ են: Իրենց ազգային ձևով ու էությանը ուշագրավ են նաև 1885 թ. Գ. Շերենցի կազմած «Վանա սագն ժողովածուի նյութերը, որոնց շարքում պատկառելի մաս ունեն Վասպուրականի մանկական երգերը:

19-րդ դարի 90-ական թվականներին նոր թափ է ստանում օրորոցային, մանկական երգերի և խաղերգերի հավաքումն ու հրատարակումը: Այդ շրջանում լույս են տեսնում մի շարք բանահյուսական, ազգագրական, հնախոսական և տեղագրական ժողովածուներ, որոնց էջերում դարձյալ վերոհիշյալ երգերը իրենց մեծ բաժինն ունեն՝ Ալ. Մխիթարյանց, *Տաղեր ու խաղեր*, Ալեքսանդրապոլ, 1900, Գար. Հովսեփյան, *Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից*, Թիֆլիս, 1892, Վ. Տեր-Մինասյան, «*Անգիր դպրու-*

թինք և առակք, Կ. Պոլիս, 1893, Հ. Ճանիկյան, «Հնութիւնք Ակնայե, Թիֆլիս, 1985 և այլն: Այս գործին նկատելիորեն նպաստում են նաև պարբերական մամուլը՝ «Մեղու Հայաստանին», «Բյուրակներն», «Արարատը», «Արաքսը», «Նոր դարը»: Հետագայում խոշոր աշխատանք են ծավալում «Ազգագրական հանդեսն ու «Էմիսյան ազգագրական ժողովածուն», որոնք հետամուտ էին տալու ժողովրդի վսեմ ու առաքինի հատկությունները, հնամենի կենցաղն ու սովորույթները [1, էջ 9]:

Մանկական երգերի ու օրորոցայինների հիմնական ժառանգությունն ընդգրկված է Ռ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերն գրքում/1970/»: [4, էջ 235]

Մանկական խաղերի բացառիկ անուններ ու վերջիններիս բացատրություններ է ամփոփում Գ. Սրվանձադյանցի I հատորը («Բանաբանն խորագրով):

Երեխան խաղի ու խաղերգերի միջոցով արտացոլում է ներկա պահի նկատմամբ իր հուզագգայական վերաբերմունքը: «Մանկախաղաց երգերը կենսունակ են, որովհետև նրանց սնուցող հողը հարատև է, կա ու կլինի [1, էջ 12]: Այնտեղ, որտեղ կան ծնունդ ու մանկատածություն, մանկական երգերը շարունակում են հնչել որպես կյանքի շարունակականության գովք:

Ըստ ժողովրդական պատկերացման՝ երկունքի ցավերի մեջ, երբ հոգին հոգուց անջատվում է, ծննդկանն ի՛նչ էլ խնդրի Աստծուց, կկատարվի: Ու այդ վեհ վայրկյանին մոր շուրթերին օրհնանքի բանաձև կա՝ *Տե՛ր, քու կապած բալուղդ դու քանդես:*

Հայ բանահյուսական տեքստերում առկա է նաև տղա երեխային նախապատվություն տալու մտայնություն. *Բերեք ուրեմ կովի ժուրով, քած եմ բերե, քած, //Բերեք ուրեմ լոշի փրփուր, լաճ եմ բերե, լաճ՝* հաստատելով, որ տղա երեխան է օջախի ծովսը ծխեցնո-

ղը: Այս մտայնության զուգահեռը տեսնենք Վանա բարբառով խաղերգերից մեկում.

*Աղջիկ, աղջիկ, քարե չրիչիկ,
Մկան պոչիկ, կապույտ րոտիկ,
Պրիկ, մրիկ, շան ակընջիկ, առ քյո խրճիկ,
Ալուր մաղեն, գյամ քե թաղեն:*

*Տըղա, տըղա, սիրո՛ւն տըղա,
Առ քյո ճաներ, գյնա խաղա,
Դու իմ գլխուն պոծառ ջըղա,
Ալուր մաղեն, գյամ քե պահեն: [1, էջ 151]*

Մայրն առհասարակ մանկանը հասցեագրված երգերում գովերգում է թե՛ նրան, թե՛ նրա բաժինքն ու մանկանոցի պարագաները: Առանձնակի կիրառական գործառույթ ունեն երեխայի քայլքի ու լոգանքի երգերը: Քայլքի երգերում գերակա են բացառապես բանաձևային մաղթանք-օրհնանքները, էթնիկական սիմվոլները, *բարին բացելու, չարը կապելու* բարեբանությունները: Եթե երեխան ուշ էր ոտքի ելնում, կարմիր թել էին կապում աջ ոտքին, որ կարմիր օրեր ունենար: Կամ թխում էին բոքոն, անցկացնում մանկան ոտքին, որ հացի օրհնությամբ ու առատությամբ ապրեր: Ոտքի կամ քայլքի հետ կապված նմանողական հմայություններն առնչվում են մեր հնամենի պատկերացումներին: Եթե երեխան կոխ հիվանդություն ուներ, դիմում էին լուսնին, որ ապահովեին շիտակ քայլքը. *Լուսին ախպեր, դու տղա, ես՝ տղա, տղեն տղուց չի վախենա:*

Մանկան քայլքի ուշագրավ օրինակներ են

*Տոբիկ, Կոյիկ Կաթցի,
Գարուն ելի խաղցի,
Վերև Կոյիկան մարգ է,
Ներքև Կոյիկան վարդ է: [1, էջ 183]*

....

*Տոբիկ փոխիր,
Կանաչ կոխիր:*

Հիշյալ օրինակներում մայրը նախապատրաստում է մանկան քայլքը, հորդորում քայլել, ցանկանում է, որ նրա ոտ կոխած տեղը կանաչ ու ծաղկուն լինի:

Ըստ ժողովրդական հավատալիքի՝ որպեսզի աղջիկ երեխան շարմաղ լիներ, ջրի մեջ հավկիթ էին գցում, որ դեքին պուճ/փոսիկ/ ունենար, տղա երեխային լողացնելիս ջրի մեջ գցում էին երկաթ կամ դանակ, որ ուժեղ ու հզոր լիներ:

Մանկան լոգանքի երգերում ևս արտահայտվում են ժողովրդի իմաստությունը ու բանաձևային կենսահայեցողությունը: Դրանք 2, 3 կամ ավելի տողանի համառոտ ստեղծագործություններ են, իրենց էությամբ օրինանք-բանաձևեր, որոնք զուգակցվում են երեխայի ֆիզիկական կոփվածությունն ապահովող խիստ պրակտիկ շարժումներին: Օրինակ.

Երկան վզիկ, //Թեթվաջրիկ, //Բոլորի քունը իմ բալին:

Կամ՝ Էրկան վզիկ, //Թափ Կոու ցավիկ, //Շալկե մըսիկ: [3, էջ 12]

Գոյություն ունեն վարքի ազգային և համամարդկային մոդելներ, որոնք ուշագրավ դրսևորումներ են ստանում մանկախաղաց երգերում ու խաղերգերում: Վարքի համամարդկային ստերեոտիպերը յուրաքանչյուր էթնոսի մակարդակում ունեն իրենց յուրահատկությունները:

Կենսահոգեկան ժառանգականության համաձայն՝ վարքի մի շարք ձևեր, ծագելով խաղերի մեջ, տարածում են գտնում մեր կենսական տիրույթում՝ իբրև աշխարհաճանաչման միջոց: Սրանով հանդերձ՝ խաղի ու խաղերգերի մեջ մենք իրացնում ենք որոշակի սոցիալական դերեր՝ արտացոլելով մեր էթնոսի խառնվածքի խնդիրը:

Անշուշտ, մեր ազգային վեպում ևս ստերեոտիպացվում են էթնիկական վարքի առավել նշանակալի տեսակները: Քանի որ մենք պատերազմիկ ժողովուրդ ենք, մեր խաղերի մեջ էլ գերակա են ազգային ուժային խաղերը /գուրգախաղ, մկունդախաղ, գոմշակոճիկ և այլն/:

Կոնֆլիկտային կամ ճգնաժամային իրավիճակներում էթնոսի և անձի բնավորության գծերը ինքնաբերաբար նույնականանում են և վարքի վերածվում: Այս պարագայում կարևորվում է բանահյուսական նյութի փոխանցումն ու նրա գործառական նշանակությունը: Հաղորդողը՝ մայրը, երեխային պատմում է հայրենիքի առկա վիճակը.

*Դու պզտիկ ես, բարով մեծնաս,
Բարով մեծնաս, զինվոր դառնաս,
Բուրի, բուրի, բուրի ջան...*

Էթնիկական բնավորությունը որոշակիորեն անհատականացված ձև է տվյալ անձի մեջ: Ստերեոտիպերն ու վարքի ձևերը ժառանգվում են էթնոկլիրների կողմից: Օրորների մեջ հիմնական *ես*-ը դառնում է կենտրոն, միջուկ, որի շուրջը ձևավորվում, կազմավորվում են ազգի բարոյությունն ու յուրահատկությունները:

Մանկական երգերից են զանազան հաշվերգերն ու խաղավարտի երգերը: Բոլոր դեպքերում խաղերն ու խաղերգերը, լինելով ան-

ձի հոգևոր պահանջմունքների բավարարում, իրենց նախնական մոտիվացիայի մեջ հասցեագրված են երեխային, հագեցված են մանկան նկատմամբ ջերմ սիրով ու գործով, նրա ապագայի հանդեպ մեծ հույսերով, երեխային ամեն կարգի չարիքից պաշտպանելու հմայական միջոցների գործության խոր հավատքով [4, էջ 235]:

Կառուցվածքային տեսակետից խաղերգերը խմբավորված են բաժիններով: Ըստ Ռ. Գրիգորյանի [1, էջ 40]՝ առաջին բաժինը հաշվերգերը, վիճակախաղիկներն են, որոնք ասվում են խաղը սկսելուց առաջ, խաղը առաջինն սկսելու կամ խմբի ավագ ընտրելու համար: Հանգավորված քառատող, վեցյակ, ությակ, մեծ մասամբ մթագնված բովանդակությամբ, հնարովի կամ օտար բառերի կոյտից կազմված երգեր, որոնք աչքի են ընկնում շարժունակությամբ ու կենսուրախությամբ: Դրանք երեխային տրամադրում են խաղն սկսելու, քանի որ խոսքի ռիթմիկ միավորներն են:

«Հայերի հնագույն հավատալիքը հավաստում է, որ այլուրի պարկերը, թխած հացը, «ինչքն ու մալըն չեն հաշվի, տան «բերեքեթը կերթան: «Հավը, ճիվը չեն հաշվի... նման և այլ առած-ասացվածքներ ևս վկայում են, որ **հաշիվը** ժողովրդի կողմից փոխարինված պետք է լիներ ինչ-որ բանաձևով կամ աղավաղված բառակոյտով, որը հիմնականում ծառայելով իր նպատակին, «գերծե էր պահում գյուղացուն այն ոգիներից, որոնք լսելով՝ կարող էին վնասել կամ խանգարել գործի ընթացքը: Ահա այս վախն էր պատճառը, որ մարդը սկսում է դիմել պայմանական բանաձևերի օգնությանը, որի տակ թաքնված է հաշվելու և վիճակի գաղափարը:

...Նոր բառերի ներմուծմամբ հաշվերգը կորցնում է իր նշանակությունը և երբեմն փոխարինում է անիմաստ ոտանավորի ու

միայն ռիթմով է կարծես գործակցում հաշվելու նպատակին: [1, էջ 42-43]

Ալլա, բալա, նիցա, // Դուս կաբանիցա,

Հե՛յ գիդի վանչո, // Ռաս կապիտանչո, // Փա-լան-չո:

Հիշյալ հաշվերգի մեկնաբանման միանգամայն տարբեր տեսակետներ կան. օրինակ՝ Ա. Պետրոսյանը «Մանկական բանահյուսությունը որպես ուղիղ ճանապարհե հոդվածում նշում է. «Ալաբալան նշանակում է «անլուրջ, հիմար, անիմաստ բանե, իսկ նիցա-ն տարածված սլավոնական ածանց է: Ողջ տողն ակնարկում է հաշվերգերում հաճախ հանդիպող այբուբենի առաջին տառերը՝ ա, բ (թեև հնարավոր է նաև այլալեզու ազդեցություն ենթադրել)....Բացի այդ, ակնարկվում են այբուբենի հաջորդ տառերը՝ գ, դ (իսկ Վանչոն՝ թերևս սլավոնական այբուբենի երրորդ՝ վ տառը): Այս հաշվերգը մինչ օրս մնում է հայ մանուկների մեջ ամենասիրված ու ամենատարածված հաշվերգը: [6]

Ուշագրավ է Ս. Պետրոսյանի «Եռյակ դիցանուններ հայկական մանկական խաղերի գուշակման և հաշվերգի բանաձևերումե հոդվածը, որում հեղինակը վերլուծել է *«Ալնիս, Բալնիս, հավալամ Սուրբ Սարգիսե գուշակման բանաձևը և «Ալա, Բալա, Նիցաե* խաղամուտի հաշվերգի զուգահեռը՝ ընդգծելով, որ Հայաստանի նախնադարյան հասարակության եռադասյա կառուցվածքով պայմանավորված դիցաբանի գլխավոր աստվածությունների եռյակ կազմելու հնդեվրոպական սկզբունքը իր արտացոլումն է գտել նաև հայոց մանկական խաղերի խաղամուտը՝ նշող գուշակման և հաշվերգի բանաձևերում: Խաղամուտերի գուշակային բանաձևում և զուգահեռ տեքստի առաջին տողում հիշատակված են երեք աստվածությունները, որոնք հանդես են գալիս *Արևի, Բեր-*

քուբարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածություններ հերթականությամբ:[5, էջ 69-70]:

Կան խաղերգեր, որոնք ինքնաբույս ստեղծվում են երեխաների կողմից և ժամանցային ու ընդօրինակող բնույթ ունեն: Երեխաները սիրում են նմանակել, մանկական երգերից են նաև ծաղրերգերը, որոնք ուղեկցել են նրանց խաղերին և աչքի են ընկել սրամտությամբ, ինքնատիպ ռիթմով և լեզվական պատկերավոր դարձվածներով:

*Հիւլեր, Հիւլեր, ամանչի,
Կընկա դեյրով մի՛ փախչի,
Հիւլերը ընգավ ցեխը,
Մեխը մըրավ քեխը:[Մեր հավաքածուից,-Կ. Ս.]*

Կենցաղն ու առօրեականությունը ինքնաբերաբար մտնում են երեխաների խաղերի ու խաղերգերի մեջ, որովհետև նրանց կենսաճանաչողությունը առավելապես ձևավորվում է առտնին հարաբերություններում:

Մանկական խաղերում ու խաղերգերում արքետիպային մտածողության ձևերն արտահայտված են չարի ու բարու սիմվոլիկայով: Հիշենք հայտնի մանկախաղն իր կանոններով, երբ բարի սագամայրը զգուշացնում է իր ձագուկներին՝ *Սագեր, սագեր, փուն եկեք:/ -Ինչի՞ համար: /-Գայլը սարի հեղին է:/ -Մեզ ի՞նչ կանի:/-Ձեզ կուրի:/ -Ի՞նչ գույնի է:/-Սև, սպիտակ,մոխրագույն, դե շուր վագեք դեպի փուն:*

Խաղավարտի երգերում ևս հիմնական գաղափարն այն է, որ կյանքում ինչ խաղ էլ խաղաս, միևնույնն է, պիտի վերադառնաս տուն, իմաստային մեծ ընդգրկումով՝ հայրենիք՝ որպես ապահով

հանգրվան ու շարունակական վերադարձ դեպի բարին ու բարօրությունը:

*Հ'ամենն իր Կուն, լազլագն իր բուն,
Խաչ գավազան իմ քեռու Կուն:
Կամ՝ Ծղի բուն, ծղի բուն,
Յէփ բըղի մթնի, էրպանք Կուն:*

Տունդարձը հայ էթնոսի համար ունի օջախին ու շեմին հարագատ մնալու, նվիրված լինելու գաղափար, որը խաղավարտի բանաձևով փոխանցվում է երեխաներին:

Սրանով հանդերձ՝ ստերեոտիպ վարքը շատ հին է. յուրաքանչյուր սերունդ կարող է ունենալ իր հոգևոր պահանջմունքը՝ որոշակի նոր մեկնաբանություն տալով պատմամշակութային զարգացման ընթացքում պարբերաբար կրկնվող խաղերին ու մանկախաղաց երգերին: Ուշագրավ է, որ եթե անգամ մոռացված է ծիսական բանաձևի ստեղծման մոտիվը, ապա ամեն մի նոր սերունդ ունի դրա բացատրությունն ու հիմնավորումը, որ երբեմն բուն տեքստից կարող է հեռացված լինել: Ավանդական կաղապարաձևը մոդել է, որը դրսևորվում է էթնոսի խաղային վարքում: Խաղերգերում՝ տեքստային դրսևորումների մեջ, երբեմն առկա է ավանդական կաղապար-վարք կապը, որի մեջ էլ՝ լեզու-խոսք-կող-հաղորդակցում-թաքուն վարք /իմա՝ հաշվերգեր/-բացահայտ վարք առնչություններն են: Այդ նշանակում է, որ ստերեոտիպ վարքի բոլոր ձևերը՝ ավանդույթներ, սովորույթներ, սոցիալականացման հնարներ, արհեստավարժ վարքի զանազան ձևեր, ինքնապաշտպանական գործառույթ են իրականացնում անձի կյանքում և հզորացնում են երեխայի *էս*-ը:

Էթնիկական ստերեոտիպերը, որոնք կարող են լուծել անձի ներհոգեկան կոնֆլիկտներ և արտահայտված են վաղագույն երգերում /հատկապես մանկանց հասցեագրված կամ նրանց կողմից կատարվող/, սոցիալական դիրքորոշումների յուրահատուկ տեսակներ են, թեև շատ կայուն, բայց ենթակա են փոփոխությունների: Էթնիկական ստերեոտիպերը սերտորեն կապված են անձի էթնիկական *ես*-կոնցեպցիայի և հոգենկարագրի հետ, որոնք բավականին տպավորիչ են էթնոսի մակարդակում:

Եզրակացություն. Այսպիսով՝ խաղերի ու խաղերգերի և էթնոհոգեբանական երևույթների կապը փախադարձ է ու բարդ: Էթնոսի հոգեկան կերտվածքը օբյեկտիվացվում և ամրապնդվում է նրա բանավոր մշակույթի մեջ, որը վկայում է անձի հոգեկան մշակույթի և մշակվածության աստիճանի մասին: Եթե էթնոսը հակված է շարունակ վերարտադրելու վերոհիշյալ բանահյուսական արժեքները, այդ բխում է նրա կայուն պահանջմունքներից, հոգեկերտվածքից: Հայ բանասաց հաղորդողը առաջնորդվում է ազգային ինքնության պահպանման խնդրով՝ նախապատվություն տալով ազգային լեզվամտածողությամբ խաղերի ու խաղերգերի փոխանցմանը: Այլազգի բանավոր մշակույթի տեքստային իրացումները երեխայի կողմից կարող են ընկալվել մակերեսորեն կամ մեխանիկորեն, քանի որ նրա հոգևոր ծննդաբանության մեջ՝ ազգային ստերեոտիպերում ու մոդելներում, նման բաղադրիչները գերակա չեն:

Էթնոսի բանավոր տեքստերը՝ բանահյուսական հնամենի նմուշները, հաղորդվում են սերնդեսերունդ՝ նոր ժամանակների մտածողության մոդելավորմամբ:

Բանավոր ավանդված մանկական տեքստերը, որոնք անընդհատ փոխվում են ժամանակի մեջ, ըստ էության, ամրակայում են

ընտանիքի ինքնապաշտպանական մեխանիզմները և հզորացնում են ընտանիքի յուրաքանչյուր անդամի *ես*-կոնցեպցիան:

Ամփոփում

Մեր թեմատիկ ուսումնասիրության առանցքում մանկախաղաց երգերն են, խաղերգերն ու հաշվերգերը, քայլքի ու լոգանքի երգերը, խաղավարտի երգերը, որոնք գրառել ենք 1983-88 թթ. Շիրակի մարզում: Սույն հոդվածը միջգիտակարգային բնույթ ունի՝ ընդգրկելով էթնոհոգեբանական և բանագիտական հարցեր:

Նյութը դիտարկված է պատմահամեմատական մեթոդով, էթնիկական մոդելների ու ստերեոտիպերի համատեքստում: Մարդկության կյանքի բոլոր ժամանակներում մանկանց հասցեագրվող բանավոր երգաստեղծությունն ու մշակույթը նորովի են կենցաղավարում և արդիական են յուրաքանչյուր սերնդի համար նոր շեշտադրումներով:

Անդրադարձել ենք մանկախաղաց երգերին, խաղամուտի հաշվերգերին ու խաղավարտի երգերին՝ կապված որոշակի խաղային գործողությունների հետ, մանկական քայլքի ու լոգանքի երգերին, դրանց կենցաղային գործառույթի, կատարման ձևերի, նաև՝ մանկախաղաց երգերի բանաստեղծական համակարգի մի քանի առանձնահատկություններին, երգերում արտահայտված հիմնական գաղափարին: Վկայաբերել ենք ժողովրդական պատկերացումներ ու ընկալումներ, որոնք հաճախ արտահայտված են հայ երգային բանահյուսության մեջ, հատկապես մանկաշխարհի երգերի տարբեր տեսակներում:

Բանալի բառեր՝ *էթնոս, մանկական խաղ, խաղերգեր, արքերիպ մյուս-ծողություն, գործառույթ, ազգային խորհրդանիշ, դիրքորոշում:*

ETHNIC MODELS AND STEREOTYPES IN CHILDREN'S SONGS AND GAMES

Karine Sahakyan

PhD in Psychology

*Shirak Center for Armenological Studies NAS RA
Shirak State University after M.Nalbandyan, Armenia*

Roza Hovhannisyan

Shirak Center for Armenological Studies NAS RA, Armenia

There are national and universal models of behavior that are remarkably manifested in children's songs and games. Universal stereotypes of behavior have their own characteristics at the level of each ethnic group.

In accordance with biological and psychological heredity, a number of forms of behavior that originated in games have travelled in our life sphere as a means of knowing the world. In games and games, we perform certain social roles that reflect the temperament of our ethnic group. Of course, in them the most significant types of ethnic behavior are stereotyped as primitive ways of thinking that contribute to the adaptation of the entire ethnic group. The child reflects his emotional attitude to the present moment through the game and games.

In all cases, games and songs, being the satisfaction of the spiritual needs of a person, in their initial motivation are addressed to the unborn child (for example, inventing different songs related to gender, using desire formulas, color division: blue-pink, etc.).

Stereotypical behavior is very old. each new generation may have its own spiritual needs, giving a certain interpretation to the games and children's songs, which are regularly repeated in the course of historical and cultural development. It is noteworthy that even if the motive for creating a ritual formula is forgotten, each new generation has its own explanation and justification, which can sometimes be removed from the original text. The traditional template is a program and a model that manifests itself in the play behavior of an ethnic group. In games, in text manifestations, the traditional pattern-behavior connection is sometimes

observed, in which there are also relations language – speech – code – communication – hidden behavior /implicit messages/explicit behavior. This means that all forms of stereotypical behavior – traditions, customs, socialization techniques, various forms of professional behavior – perform a self-protective function in a person's life and strengthen the child's ego.

Ethnic stereotypes, capable of resolving internal psychological conflicts of a person and expressed in the earliest songs (especially addressed to children or in their performance), represent a kind of social position, although very stable, but subject to constant change.

Ethnic stereotypes are closely related to ethnic self-esteem and psychographics of a person, which are quite impressive at the ethnic level.

In this article, we will consider children's play songs, recitations and ritual songs associated with certain play activities, children's songs for walking and bathing, their everyday function, methods of performance, features of the poetic structure of children's play songs. We shall describe the game and the gamer as a micro-model of the real life of the big world.

ЭТНИЧЕСКИЕ МОДЕЛИ И СТЕРЕОТИПЫ В ИГРОВЫХ ПЕСНЯХ И ИГРАХ

Карине Саакян

канд.психол.наук, доцент

*Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Ширакский
государственный университет, Армения*

Роза Оганнисян

Ширакский центр арменоведческих исследований НАН, РА, Армения

Существуют национальные и общечеловеческие модели поведения, которые замечательно проявляются в детских песнях и игровых песнях. Универсальные стереотипы поведения на уровне каждого этноса имеют свои особенности. В соответствии с биологической и психологической наследственностью ряд форм поведения, зародившихся в играх, распространился в нашей жизненной сфере как

средство познания мира. В играх и плясках мы выполняем определенные социальные роли, отражающие темперамент нашего этноса. Конечно, в них наиболее значимые типы этнического поведения стереотипны как формы предварительного мышления, способствующие адаптации всего этноса. Свое эмоциональное отношение к настоящему моменту ребенок отражает через игру и игропляску. В основном игры и игропляски, являясь удовлетворением духовных потребностей человека, по своей первоначальной мотивации адресованы детям всех возрастов. Стереотипное поведение очень старо. Каждое новое поколение может иметь свои духовные потребности, придающие определенную интерпретацию играм и детским песням, которые регулярно повторяются в ходе историко-культурного развития. Примечательно, что даже если мотив создания ритуальной формулы забыт, каждое новое поколение имеет свое объяснение и обоснование, которые иногда могут быть удалены из исходного текста. Традиционный шаблон – это программа и модель, которая проявляется в игровом поведении этноса. В текстовых проявлениях игр иногда наблюдается традиционная связь шаблон-поведение, при которой существуют отношения язык-речь-код-коммуникация-скрытое поведение (т.е. сообщения) явное поведение. Это значит, что все формы стереотипного поведения - традиции, обычаи, приемы социализации, различные формы профессионального поведения - выполняют в жизни человека самозащитную функцию и укрепляют эго ребенка. Этнические стереотипы, способные решать внутренние психологические конфликты человека и выраженные в самых ранних песнях (особенно обращенных к детям или в их исполнении), представляют собой своеобразные типы социальных позиций, хотя и весьма устойчивые, но подверженные постоянным изменениям.

В статье мы рассмотрим детские игровые песни, декламации и игровые песни, связанные с определенной игровой деятельностью, детские песни для прогулок и купания, их бытовую функцию, способы исполнения, а также некоторые особенности поэтического строя детских игровых песен, основной идее, выраженной в песнях. По сути, мы опишем игру и игровые песни как микромодель реальной жизни большого мира.

Ключевые слова: этнос, детская игровая песня, архетипическое мышление, функция, национальный символ, позиция.

References

1. Grigoryan R.H. *Armenian folk lullabies and children's songs* [Hay zhoghovrdakan ororots'ayin yev mankakan yerger], USSR Publishing House, Yerevan, 1970, 466 pages. (in Armenian).
2. *Eminian ethnographic collection* [Eminyan azgagrakan zhoghovatsu, Moscow-Alexandrapol], 1901 (in Armenian).
3. *Armenian folk games, with diligence*, V. Bdoyan, [Hay zhoghovrdakan khagher, ashkhataşirut'yamb], Publishing House of the USSR Academy of Sciences, 1983, 260 pages. (in Armenian).
4. Harutyunyan S. *Scientific Essays*, [Banagitakan aknarkner], Yerevan, RA NAS "Science" Publishing House, 2010, p. 235/ (in Armenian).
5. Petrosyan S. *"Three legendary names in the divination and calculation formulas of Armenian children's games"* [Yerryak dits'anunner haykakan mankakan khagheri gushakman yev hashvergi banadzeverum], /NAS SHH Center, "Scientific Papers, 1/26, 2023, pages 69-70/ (in Armenian).
6. <https://granish.org/children-folklore-2/>

ԷԹՆՈԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ստեղծող Դավթյան

*Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ, Հայաստան*

Նախաբան

Էթնոերաժշտագիտությունը անցել է ձևավորման տևական փուլերով, և որպես գիտության ինքնուրույն ճյուղ վերջնականապես ձևավորվել է 19-րդ դարում: Եզրույթը առաջին անգամ օգտագործել է հոլանդացի գիտնական Յապ Կունստը 1945 թվականին: Էթնոերաժշտագիտության ուսումնասիրման ավանդական մեթոդներից են՝ դաշտային հավաքչական կամ բանահավաքչական աշխատանքը, երաժշտության դիտարկումը որպես սոցիալական պրակտիկա, ինչպես նաև երաժշտության աշխարհագրական-տարածքային դիտարկումը:

Երաժշտական նյութի գրառման համակարգը ուներ բազմաթիվ թերացումներ ու բացթողումներ, և հետազոտողները, ժամանակի տեխնիկական ձեռքբերումներին համաքայլ, ավելի նպատակահարմար գտան օգտագործել տեխնիկական միջոցներ՝ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կառուցվածքի, ինտերվալային կազմի և այլ կարևոր պարամետրերի որոշման համար: Այսպես, 1877 թվականին Թոմաս Էդիսոնը ստեղծեց ձայնագրիչը, որի միջոցով ձայնագրված հնչյունագրերը ուսումնասիրվում էին գիտնականների կողմից: Էդիսոնի ձայնագրիչը հիմք դրեց էթնոերաժշտագիտության ոլորտում տեխնիկայի կիրառմանը:

Նույն տասնամյակում ամերիկացի երաժշտագետ-հետազոտող Չարլզ Սիգերը ձևավորեց մի համակարգ, որի շնորհիվ կարողա-

բնականաբար, շատ ավելի ցածր է, քան էթնոերաժշտագիտության մեջ:

Ռուսաստանում երաժշտագիտության ոլորտում ձայնի բնութագրերի վերլուծության գործիքային մեթոդներ ստեղծողներից առաջինը եղել է Վիկտոր Ռաբինովիչը, ով 1930-ական թվականներին ստեղծեց **օսցիլոսկոպը**: [1] Օսցիլոսկոպը սարք էր, որը բարակ ճառագայթով ցուցադրում էր ձայնային տատանումները լուսազգայուն նյութի վրա:

ԽՍՀՄ-ում իրականացվել է երաժշտական գիտության խնդիրների վրա կենտրոնացած հաշվողական համակարգերի ստեղծում և զարգացում, մասնավորապես Վ.Լ. Գոշովսկու ուսումնասիրություններում: Ամենահամոզիչ արդյունքները ստացվել են ինֆորմացիոն-որոնողական համակարգի կառուցվածքավերլուծական կատալոգի շնորհիվ (Универсально структурно-аналитический каталог), որը մշակվել է 1975թ.-ին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում: Առաջին վերլուծություններից մեկն է եղել հայկական ժողովրդական «Գորանիե պարերգը»: [2]

2008թ.-ին Կանադայում հիմնադրվեց **Երաժշտական տեղեկատվության որոնման միջազգային միությունը** (The International Society for music Information Retrieval), կրճատ՝ **ISMIR կամ MIR**): [3]




«ՄԻՐ» երաժշտական համայնքի գերնպատակն է նախագծել համակարգչային ծրագրեր երաժշտությանն առնչվող տվյալների մշակման, վերլուծության, որոնման և հասանելիության համար:

Այն տարիների ընթացքում զգալի ներդրում է ունեցել էթնո-երաժշտագտագիտության ոլորտում: Ուշագրավ ձեռքբերումներից է հազարավոր երգերի մասին հավաքագրված տվյալների բազայի ստեղծումը, որը հասանելի է հետազոտողների համար:

Այսօր բազմաթիվ ծրագրեր թույլ են տալիս բացահայտել մեղեդու մեջ առկա հնչյունաբարձրությունները, համահնչյունները, ռիթմական պատկերները և չափը: Ծրագրերի հիմնական նպատակներից մեկն է մեղեդու վերծանման միջոցով նրա բնօրինակը ստանալը՝ հատուկ մշակված ինֆորմացիոն բազաներում նմանատիպ նմուշներ փնտրելու միջոցով:

Համակարգչային ծրագրերի ստեղծման անհրաժեշտությունը կապված է նաև ժողովրդական երաժշտության մեջ գոյություն ունեցող որոշակի առանձնահատկությունների հետ: Ժողովրդական երգերում հնչյունաշարի տոների միջև եղած տարածությունները սովորաբար շատ ավելի փոքր են, քան տեմպերացված երաժշտության մեջ, ինչի հետևանքով 12 կիսատոների բաժանման տրամաբանությունը դառնում է ոչ ճիշտ: Այդ իսկ պատճառով համակարգչային վերլուծության մեջ կիրառում են երաժշտական չափման միավոր՝ երաժշտական ցենտ: 100 ցենտը հավասար է 1 տոնի: Այսպիսով, ժողովրդական երգեցողության մեջ տոների միջև օգտագործվում է 15-20 ցենտ միջակայք: Իսկ SPAX [4] կոչվող ծրագրի օգնությամբ մեղեդին նոտագրվում է ոչ ավել, քան 5 ցենտ սխալով, ինչը համապատասխանում է մարդկային լսողության հնարավորություններին:

SpaX-ը ծրագիր է, որը մշակվել է հատուկ էթնոերաժշտական հետազոտություններ կատարելու համար: Այս ծրագրի կարևոր առանձնահատկություններից է երաժշտական տվյալները պատկերավոր ցուցադրելու հնարավորությունը:



Համակարգչային վերծանում՝ սրացված SPAX ծրագրի միջոցով

Spax ծրագիրը օգտագործվել է բազմաթիվ էթնոերաժշտական ուսումնասիրությունների մեջ, կիրառվել է շատ երկրներում սկսած Հարավային Աֆրիկայից մինչև Եվրոպա:

Վերլուծության մեկ այլ տեսակ է ութնական օրինաչափությունների վերծանումը համակարգչային ծրագրերի միջոցով: Օրինակ՝ շատ աֆրիկական երգեր կառուցված են կրկնվող ութնական օրինաչափության հիմքի վրա, որը կոչվում է **կլափ**: [5] Չնայած այն

բանին, որ աֆրիկական երաժշտաժանը բավական բարդ դիմա-
կան պատկերներ ունի, վերլուծական ծրագրի հիմքում ունենալով
կլավի օրինաչափությունը, հնարավոր է դառնում ճշգրիտ հետևել
այդ դիմին:

2007թ.-ին Ավստրիայի "Միջառարկայական երաժշտական հե-
տազոտություններ" [6] պարբերականում հրապարակված «Հաշ-
վողական էթնոերաժշտագիտությունն հոդվածը վերլուծում էր ե-
րաժշտագիտության մեջ համակարգչի կիրառման ոլորտները և
անդրադառնում որոշ արդյունքների, որոնք գրանցվել են Spax
ծրագրի օգնությամբ: Այսպես, հիշատակվում է ֆիննական հետա-
զոտական մի խմբի մասին, որը կատարել է գրեթե 6200 ժողովր-
դական երգերի վերլուծություն ձայնագրությունների տեսքով:
Խումբը ծրագրի օգնությամբ հաշվարկել է ձայնի տևողության
բաշխումները տարբեր բարձրությունների վրա, ինչպես նաև իրար
հաջորդող տոների միջև ընկած ինտերվալը: Այս գործողություննե-
րից հետո հետազոտական խմբի անդամները դիմել են նեյրոնա-
լին ցանցին, որպեսզի ստացված հատկանիշները ընդհանրացվեն
և ինֆորմացիոն բազայում որոնվեն նմանատիպ մեղեդիներ:

Երաժշտական տեղեկատվության որոնման միջազգային միութ-
յան 12-րդ գիտաժողովում ներկայացվեց իրանական դաստգահներ-
ի վերլուծության մի համակարգ: Վերլուծության համար ձայ-
նագրվել էին 210 տարբեր դաստգահներ [7]՝ հիմնականում վոկալ
կատարմամբ: Համակարգչային ծրագրի միջոցով որոշվում էր կա-
տարման մեջ առկա լադային մոդուլյացիան:

Միության անդամ, երաժշտագետ գիտահետազոտող Ալի Գե-
դիկը իր առենախոսության [8] մեջ ներկայացնում է արևելյան ե-
րաժշտության ավտոմատ համակարգչային վերլուծությունը՝ հաշ-
վի առնելով դրա առանձնահատկությունները: Համակարգը ապա-

հովում է մուղամի ավտոմատ ճանաչում և վերծանում: Գեղիկը նու-
տագրման համակարգում, որպես ամենափոքր ինտերվալ օգտա-
գործում է **հոլդերյան կոման**, որը հավասար է օկտավայի 1/53-ին
կամ 22.64 ցենտի: Համակարգի առջև ծառացած խնդիրն էր կենտ-
րոնական տոնը և կատարվող մուղամի տեսակը որոշելը: Այս եր-
կու պարամետրերի վերծանումից հետո ստացված ինֆորմացիան
համեմատվում էր նախկինում ուսումնասիրված տարբեր մուղամ-
ների հետ և աշխատանքներ էր տարվում փնտրելու բնօրինակը:

Համակարգչային ծրագրերով չափված տևողությունները եր-
բեմն կլորացվում են տասնյակ միլիվայրկյաններ: Որոշ հետազո-
տողներ սարքերի միջոցով ստացված տվյալները կլորացնում են
մինչև տևողությունների եվրոպական ստանդարտ համակարգը,
սակայն համակարգչային վերլուծությունը թույլ է տալիս ճշգրիտ ո-
րոշել միկրոինտերվալները, մասերը և տեմպոռիթմը:

Հոլանդացի գիտահետազոտող Վան Կրանենբուրգի [9] կող-
մից 2010 թվականին ստեղծված համեմատական վերլուծության
համար նախատեսված ծրագիրը գտնում է տարբեր ժողովրդա-
կան մեղեդիների մեջ երաժշտական և ռիթմական զարգացման
նմանությունները: Հետազոտությունները կատարվում են Հոլան-
դիայում գտնվող Միլտենյան համալսարանում: Առաջին հետազո-
տություններից է եղել հոլանդական տարբեր տարածաշրջանների
ժողովրդական երգերի ձայնագրումը և ուսումնասիրումը: Ուսում-
նասիրություններից հետո պարզվել է, որ տարբեր տարածաշր-
ջանների մեղեդիներ պատկանում են նույն տոնայնական-ձայնա-
կարգային համակարգին:

Բացի վերոնշյալ ծրագրերից կան մի քանի համակարգչային և
բջջային հավելվածներ, որոնք կարող են օգտակար լինել էթնե-
րաժշտագիտական հետազոտությունների, տվյալների հավաքագր-

ման, վերլուծության և դաշտային աշխատանքների համար: Ահավասիկ որոշ հավելվածների օրինակներ, որոնք սովորաբար օգտագործվում են ոլորտում.


1. FieldRecorder (դաշտային ձայնագրիչ): Այն իրենից ներկայացնում է բջջային հավելված դաշտային ձայնագրման համար: Հավելվածը թույլ է տալիս դաշտային աշխատանքի ընթացքում ստանալ բարձրորակ ձայնագրություններ, ավելացնել անոտացիաներ և դասակարգել ձայնագրությունները: [14]



1. OnSong. Այս հավելվածը կարող է օգտակար լինել երաժշտական նշումներով աշխատող էթնոերաժշտագետների համար: OnSong-ը թույլ է տալիս ստեղծել և կառավարել, մեղեդիական, ակորդային և բառային աղյուսակներ, ինչը հարմար է դարձնում դաշտային աշխատանքի ընթացքում նշումներ կատարելու գործընթացը: [15]

2. Annotator's Workbench (թարգմանաբար՝ ծանոթագրությունների սեղան): Հատուկ մշակված էթնոերաժշտագետների համար՝ Annotator's Workbench-ը հավելված է, որը թույլ է տալիս կատարել աուդիո և վիդեո ձայնագրություններ: Այն տրամադրում է բառային անոտացիաներ ավելացնելու հնարավորություն, ինչպես նաև

ձայնագրված մեդիայի տարածաշրջանային պատկանելության մասին տեղեկատվություն ավելացնելու գործիքներ:



1. EthnoCloud. EthnoCloud-ը հարթակ է, որը կապում է տարբեր տարածքային և մշակույթային ծագում ունեցող էթնոերաժշտագետներին և երաժիշտ-կատարողներին: Այն թույլ է տալիս բացահայտել և կիսվել ավանդական երաժշտության ձայնագրություններով, համագործակցել երաժիշտների հետ և մուտք գործել համաշխարհային երաժշտության տվյալների բազա: [16]

Այսպիսով, մինչ օրս համակարգչային էթնոերաժշտագիտության շրջանակներում սկսում են ձևավորվել հետազոտության մի քանի ոլորտներ [10]

ա. Կառուցվածքային-վերլուծողական ուղղություն, որը որոշում է երաժշտության կառուցվածքը, հնչյունաբարձրությունները, համահնչյունային հաջորդականությունները (որոշ պոլիֆոնիկ ժողովրդական ստեղծագործություններում), կատարողական առանձնահատկությունները և այլն:

բ. Համեմատական և պատմահամեմատական ուղղություն, որը միտված է համեմատելու տարբեր երաժշտական մշակույթներ

րին բնորոշ մեղեդիները, և դրանց վերլուծության արդյունքում բացահայտել պատմական զարգացման ընթացքում կատարված փոփոխությունները:

գ. Փորձագիտական ուղղություն, որի շրջանակներում կատարվում է տարբեր մեղեդիների նախատիպերի որոնում:

Բացի նշվածներից, այսօր ջանքեր են գործադրվում ստեղծելու ավելի ընդհանրացված համակարգեր, օրինակ էթնոերաժշտագիտական թվային գրադարաններ, որոնք թույլ կտան տարբեր երկրների հետազոտողներին գտնել իրենց հետաքրքրող նյութը: Նման թվայնացված երաժշտական գրադարաններ ստեղծվել են Անգլիայում՝ «Բրիտանական ձայնային արխիվի գրադարան» (British Library Sound Archives) [11], Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ «Սմիթսոնյան ժողովրդական ուղիներ» (Smithsonian folkways) [12], Աֆրիկայում՝ «Աֆրիկյան երաժշտության միջազգային գրադարան» (International Library of African music): [13]

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ներկայումս կատարվող աշխատանքների մեծ մասը ծավալվում է ձայնագրությունների մշակման շուրջ: Ըստ երևույթին, այս աշխատանքները բարենպաստ են նաև այլ տեսակետներից: Օրինակ՝ այժմ բազմաթիվ ավանդական նվագարաններ ոչնչացման վտանգի տակ են, և երաժիշտների թիվը, ովքեր կարող են ստեղծագործել կամ նվագել այդ նվագարաններով, գնալով նվազում է: Այս առումով համակարգչային էթնոերաժշտագիտության ինֆորմացիոն հարթակներում պահպանվող տվյալները կարող են օգտակար լինել տարբեր գործիքների մասին պատկերացումներ կազմելու համար:

Չնայած իր բազմաթիվ առավելություններին՝ համակարգչային էթնոերաժշտագիտությունը գերծ չէ որոշակի խնդիրներից: Հիմնական մարտահրավերներից մեկը ժամանակակից համակարգ-

չային մեթոդները ավանդական երաժշտագիտական մոտեցումների հետ հավասարակշռելու անհրաժեշտությունն է: Թեև թվային գործիքները կարող են աներևակայելի օգտակար լինել մեծ քանակությամբ երաժշտական տվյալների մշակման համար, դրանք չեն կարող փոխարինել այն պատկերացումներին, որոնք կարելի է ձեռք բերել դաշտային աշխատանքի մեջ անմիջական ներգրավվածության միջոցով: Նշենք, որ համակարգչային էթներաժշտագիտությունը արագ զարգացող ոլորտ է և ունի ավանդական երաժշտության ուսումնասիրությունների մասին պատկերացումները հեղափոխելու մեծ ներուժ:

Ամփոփում

Էթներաժշտագիտությունը անցել է ձևավորման տևական փուլերով՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղ վերջնականապես ձևավորվելով 19-րդ դարում:

Մինչ օրս համակարգչային էթներաժշտագիտության շրջանակներում ձևավորվում են հետազոտության մի քանի ոլորտներ.

1. Կառուցվածքային-վերլուծողական ուղղություն, որը որոշում է երաժշտության կառուցվածքը, հնչյունաբարձրությունները, համահնչյունային հաջորդականությունը (որոշ պոլիֆոնիկ ժողովրդական ստեղծագործություններում), կատարողական առանձնահատկությունները և այլն:

2. Համեմատական և պատմահամեմատական ուղղություն, որը միտված է համեմատելու տարբեր երաժշտական մշակույթներին բնորոշ մեղեդիները դրանց վերլուծությամբ բացահայտելու պատմական զարգացման ընթացքում կատարված փոփոխությունները:

3. **Փորձագիտականություն**, որի շրջանակներում կատարվում է տարբեր մեղեդիների նախատիպերի որոնում:

Չնայած իր բազմաթիվ առավելություններին՝ համակարգչային էթնոերաժշտագիտությունը գերծ չէ որոշակի խնդիրներից: Հիմնական մարտահրավերներից մեկը ժամանակակից համակարգչային մեթոդները ավանդական երաժշտագիտական մոտեցումների հետ հավասարակշռելու անհրաժեշտությունն է: Թեև թվային գործիքները կարող են աներևակայելի օգտակար լինել մեծ քանակությամբ երաժշտական տվյալների մշակման համար, դրանք չեն կարող փոխարինել այն պատկերացումներին, որոնք կարելի է ձեռք բերել դաշտային աշխատանքի մեջ անմիջական ներգրավվածությամբ:

Բացի նշվածներից, այսօր ջանքեր են գործադրվում ստեղծելու ավելի ընդհանրացված համակարգեր, օրինակ, էթնոերաժշտագիտական թվային գրադարաններ, որոնք թույլ կտան տարբեր երկրների հետազոտողներին գտնել իրենց հետաքրքրող նյութը:

Նշենք նաև, որ համակարգչային էթնոերաժշտագիտությունը արագ զարգացող ոլորտ է և ավանդական երաժշտության ուսումնասիրությունների մասին պատկերացումները հեղափոխելու մեծ ներուժ ունի:

Բանալի բառեր՝ էթնոերաժշտագիտություն, ժողովրդական երգ, ուսումնասիրությունների մեթոդաբանություն, համակարգչային տեխնոլոգիաներ:

ON MODERN MANIFESTATIONS OF ETHNOMUSICOLOGY

Stella Davtyan

Yerevan Komitas State Conservatory Gyumri Branch RA, Armenia

Ethnomusicology went through long stages of formation and was finally formed as an independent branch of science in the 19th century. Nowadays several fields of research are beginning to form within the framework of computer ethnomusicology:

1. Structural-analytical direction, which determines the structure of music, pitches, consonant sequences (in some polyphonic folk works), performance features, etc.
2. Comparative and historical direction, which aims to compare the melodies characteristic of different musical cultures, and as a result of their analysis to reveal the changes made during the historical development.
3. Expert direction, within the framework of which the search for prototypes of various melodies is carried out.

Despite its many advantages, computer ethnomusicology is not without certain problems. One of the main challenges is the need to balance modern computer methods with traditional musicological approaches. While digital tools can be incredibly useful for processing large amounts of musical data, they are no substitute for the insights that can be gained through direct involvement in fieldwork.

It should also be noted that computer ethnomusicology is a rapidly developing field and has great potential to revolutionize the understanding of traditional music studies.

Key words: *ethnomusicology, folk song, research methodology, computer technology.*

О СОВРЕМЕННЫХ ПРОЯВЛЕНИЯХ ЭТНОМУЗЫКОЛОГИИ

Стелла Давтян

*Гюмрийский филиал Ереванской государственной
консерватории имени Комитаса, Армения*

Этномузыкалогия прошла долгие этапы становления, окончательно сформировавшись как самостоятельная отрасль науки в XIX веке. На сегодняшний день в рамках компьютерной этномузыкалогии формируется несколько направлений исследований.

1. Структурно-аналитическое направление, определяющее структуру музыки, высоту звука, гармоническую последовательность (в некоторых полифонических народных произведениях), исполнительские особенности и т. д.

2. Сравнительно-историческое направление, целью которого является сравнение мелодий, характерных для разных музыкальных культур, путем их анализа для выявления изменений, произошедших в ходе исторического развития.

3. Экспертное направление, в рамках которого осуществляется поиск прототипов различных мелодий.

Несмотря на свои многочисленные преимущества, компьютерная этномузыкалогия не лишена определенных проблем. Одной из главных задач является необходимость сбалансировать современные компьютерные методы с традиционными музыковедческими подходами. Хотя цифровые инструменты могут быть невероятно полезны для обработки больших объемов музыкальных данных, они не заменят информацию, которую можно получить путем непосредственного участия в полевых работах.

Помимо упомянутых, сегодня предпринимаются усилия по созданию более универсальных систем, например, этномузыкологических цифровых библиотек, которые позволят исследователям из разных стран находить интересующий их материал.

Следует также отметить, что компьютерная этномузыкология является быстро развивающейся областью и имеет большой потенциал для революционного изменения понимания традиционной музыки.

Ключевые слова: *этномузыкология, народная песня, методология исследования, компьютерные технологии.*

Գրականություն

1. Рабинович А. В. *Осциллографический метод анализа мелодии*. Москва. Музгиз. 1932. 32 с.
2. Компьютерная этномузыкология
<https://mus.academy/articles/kompyuternaya-etnomuzykologiya-zadachi-metody-rezultaty>
3. Երաժշտական տեղեկատվության որոնման միջազգային միության պաշտոնական կայք <https://www.ismir.net/>
4. *Харуто А. В.* Программа **SPAX** для ОС Windows: <http://kharuto.ru/>
5. Tzanetakis G. Computational ethnomusicology: a music information retrieval perspective. Proceedings ICMC|SMC|. September 2014 14-20. Athens, p. 60-74. 71
6. Tzanetakis G., Ajay K. Schloss W., Wright M. Computational ethnomusicology // Journal of Interdisciplinary Music Studies. 2007. V. 1, p. 1-24
7. Abdoli S. Iranian traditional music Dastgah classification // Proc. Of 12th International Society for Music Information Retrieval Conference (ISMIR 2011), p. 275-280.
8. Gedik A. C. *Automatic transcription of traditional Turkish art music recordings: A computational ethnomusicology approach*. Izmir. 2012. 143 p..

9. Volk A., Wiering F., Kranenburg P., Unfolding the potential of computational ethnomusicology. Amsterdam. 2011. V.1, p. 25-35.

10. Компьютерная этномузыкалогия
<https://mus.academy/articles/kompyuternaya-etnomuzykologiya-zadachi-metody-rezultaty>

11. Բրիտանական ձայնային արխիվի պաշտոնական կայք
<https://sounds.bl.uk/>

12. Ամերիկյան «Մսիթսոնյան ուղիներն ձայնային գրադարանի պաշտոնական կայք <https://folkways.si.edu/>

13. Աֆրիկյան երաժշտության միջազգային գրադարանի պաշտոնական կայք <http://www.ru.ac.za/ilam/>

14. Fieldrecorder: <https://play.google.com/store/apps/details?id=de.pfitzinger.rec>

15. OnSong: <https://onsongapp.com/>

16. Ethnocloud: <https://ethnocloud.com/>

References

1. Rabinovich A. V. *Oscillographic method for analyzing the melody* [Ostsillograficheskiy metod analiza melodii]. Moscow. Muzgiz. 1932. 32 p.

2. Computational ethnomusicology
<https://mus.academy/articles/kompyuternaya-etnomuzykologiya-zadachi-metody-rezultaty>

3. Official website of the International Union for Music Information Retrieval

<https://www.ismir.net/>

4. Haruto A. V. SPAX program for Windows: <http://kharuto.ru/>

5. Computational ethnomusicology:
<https://mus.academy/articles/kompyuternaya-etnomuzykologiya-zadachi-metody-rezultaty>

6. Official British Sound Archive website <https://sounds.bl.uk/>

7. The official website of the American "Smithson Ways" sound library
<https://folkways.si.edu/>

8. Official website of the International Library of African Music
<http://www.ru.ac.za/ilam/>

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳՆ ԻԲՐԵՎ «ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ»

Անի Հակոբյան

արվ.թեկ.

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Հայաստան

Նախաբան

Հայ ավանդական օրորոցային երգն իբրև երևույթ սկզբունքորեն գոյություն ունի այնքան, որքան հենց հայ ժողովուրդը: Ժանրի ուսումնասիրությունը սկսվեց միայն XIX դարում, երբ բավականաչափ նյութ հավաքվել և շարունակում էր համալրվել ազգագրագետների, բանագետների, ավելի ուշ նաև երաժշտագետների կողմից: Հետևաբար օրինաչափ է, որ բանագիտական դաշտում ժանրի շուրջ եզրահանգումները և ընդանրացումները ավելի շուտ եղան, որի հիմքով նաև հետագայում որոշ ակնարկներ եղան Կոմիտասի, Ռոբերտ Աթայանի հոդվածներում, ավելի խորքային հետազոտություններ կատարեցին Մուշեղ Աղայանը, Մարգարիտ Բրուտյանը, Հասմիկ Ափիսյանը: Սակայն մինչև վերջերս ժանրի շուրջ թեկնածուական թեզի մակարդակով ուսումնասիրություն մեզանում արված չէր, որի մեկնարկը տվեցինք, վստահ լինելով, որ թեման անսպառ է և պահանջում է շարունակական հետազոտություն: Այսպիսով, տարիներ շարունակ մեր գիտական հետաքրքրության թիրախն ի թիվս այլ ֆոլկլորագիտական հարցերի եղել է հայ գեղջկական միջավայրում ծնված և սերունդներին իբրև բանավոր ավանդ փոխանցված օրորոցայինը, իբրև երաժշտաբանաստեղծական երևույթ:

Նշենք, որ այս հոդվածն իր ֆորմատով ոչ այնքան տեսական-վերլուծական է, որքան հետազոտական՝ փորձել ենք հասկանալ

որքանով է օրորն ազդում մանկան ձևավորման վրա, ինչպես նաև ներկայացնել ներկա իրավիճակը ժանրի արդիականության վերաբերյալ:

Օրորոցայինը կոնկրետ գործառնությունեցող ժանր լինելուց զատ սերունդների միջև երկխոսության առաջին «կամուրջն» է, որը հատկապես ավանդական արվեստի ակտիվ կենցաղավարման ժամանակաշրջանում եղել է ամուր ու անխախտ: Ինչպես ընդգծում է բանագետ Արուսյակ Սահակյանը. «Բանահյուսական մտածողության համակարգը և ավանդական ասելիք-լսելիքի ժառանգությունը հոգևոր կամուրջ է սերունդների միջև և սերունդների միջոցով՝ դարերի միջև: Այդ կամուրջի մեկ ծայրում առաջինը նստած է մայրը, մյուս ծայրում՝ մանուկը: Ամեն ծնվողի համար իրական ու հոգևոր աշխարհն սկսվում է մորով: Մոր և մանկան միջև եղած հաղորդակցական արվեստի առաջին և գորավոր միջոցը օրորոցային երգն է, և կին բանահյուսը հանդես է գալիս իր առաջնային դերով՝ մայր» [1, էջ 65]:

Այսօր շատ գիտնականներ, հետազոտողներ հակված են այն գաղափարին, որ աշխարհի որևէ անկյունում, անկախ ստացած կրթությունից, դավանանքից, ռասայական պատկանելությունից, երեխայի օրորոցի առաջ նստած մայրն ունենում է նույնանման ապրումներ, վերաբերմունք և իր երգն անկախ աշխարհագրական դիրքից կրում է նույն լիցքն ու ինքնամոռաց սերն առ մանկիկը: Այդ երգերում մեծ հաշվով նույնն է նաև բովանդակությունը, թեմատիկան, բնույթը: BBC աշխարհահռչակ պարբերականի համարներից մեկում հրատարակված հոդվածն հենց այդպես էլ անվանվեց. «Օրորի համամարդկային լեզուն» [2], որում հոդվածագիրը անդրադարձ է կատարում տարբեր ազգերի օրորոցայինների, մեջբերում տարբեր ինստիտուտների երաժշտագետների, ֆիզիոլոգների և հոգեբանների

րի տարբեր կարծիքներ, ովքեր պնդում են դրանցում առկա մի շարք ընդհանրությունների մասին [3, էջ 50]:

XXI դարում ապացուցված է համարվում երաժշտության և մասնավորաբար օրորոցային երգի դրական ազդեցության փաստը երեխայի թե՛ հոգեբանական, թե՛ ֆիզիոլոգիական զարգացման վրա: Հիմնվելով երաժշտաթերապիայի և մասնավորաբար նորածինների վրա կոնկրետ օրորոցայինի ազդեցությանը նվիրված գիտական հետազոտության վրա [4] 2013 թվականին Նյու Յորքի Komansky Center for Children's Health հոսպիտալում բժիշկ Ջեֆրի Փըրլմընը 11 հոսպիտալներում, 2.5 տարվա ընթացքում իրականացրել է հետազոտություն ժամանակից շուտ կամ առողջական խնդիրներով ծնված երեխաների շրջանակում, որին մասնակցել է շուրջ 30 երեխա, 17 լիցենզավորված երաժշտաթերապիայի մասնագետներ, որոնք ուղղորդել են ծնողներին կամ խնամակալներին: Ըստ հետազոտության արդյունքների, այն երեխաները որոնց համար պարբերաբար երգել են օրորոցայիններ, հատկապես ծնողները և հատկապես, անկախ հետազոտության երկրից, իրենց մայրենի լեզվով՝ ավանդական նմուշներ, մի քանի անգամ ավելի արագ են արձագանքել ապարատային բուժմանն ու դրանցով իրականացվող սնուցմանը և, հետևաբար, ավելի արագ են վերականգնվել, քան ավանդական բժշկության խմբում ընդգրկվածները [5]: Իբրև հոգվածի նախաքան ասվում է. «Օրորոցային. երևույթ, որն այնքան հին է որքան մարդը, օգնում է թերհաս երեխաներին՝ ապրել»¹, և եզրահանգում. «նույնիսկ մեր այս զարգացած օրերում միշտ չէ, որ իրավիճակի փրկությունը կախված է դեղորայքից կամ բժշկական միջամտությունից, երբեմն

¹ Lullaby Medicine for Premature Babies Something as old as mankind itself is helping to keep preterm babies alive.

այն թաքնված է պարզ և հնագույն աղբյուրի՝ այն է ծնողի և երեխայի կապի մեջ՝ ձայնի միջոցով»¹:

Այս ամենն իհարկե ժողովրդի համար վաղուց բնության կանոններով, տիեզերական գիտելիքով թե ավանդաբար փոխանցված փորձով հաստատված փաստեր են, որոնք այսօր սարքերի վրա թվերով ապացուցվում ու հաստատվում են ժամանակակից գիտության կողմից: Հայ կամ այլազգի մայրը իր համար մի պարտադիր «պարտականություն» է համարել երեխային իր անուշ ձայնով խաղաղեցնելն ու քնեցնելը, իսկ որ մոր ձայնն ունի յուրահատուկ ազդեցություն երեխայի վրա ևս վաղուց ստուգված, նաև ներկայիս գիտությամբ հաստատված մեկ այլ փաստ է [6]:

Վերը շարադրվածին զուգահեռ մեկ այլ հայտնի փաստ է, որ XX դարը գիտատեխնիկական նվաճումների ժամանակաշրջան էր, որն ավաղ իր հետ բերեց նաև բացասական հետևանքներ: Փոխվեց մարդկային շփման ձևն ու բովանդակությունը՝ նույնիսկ գյուղական միջավայրում: Այս ամենն առավել ազդեց հատկապես ավանդական բանավեժների վրա, քանի որ մեծից փոքրին իբրև «ժառանգություն» փոխանցումը խաթարվեց:

Ուրբանիզմի պայմաններում, երբ բոլորը, առաջին իսկ հնարավորության դեպքում, ձգտում են դեպի խոշոր քաղաքներ, ակտիվ կյանք, իհարկե տուժում է գյուղը, որ բոլոր ժամանակներում եղել է տնտեսությունն ու հոգևոր արժեքները «սնուցող օրգան»: Ավանդականի ստեղծման ու պահպանման մեջ գյուղի և հողին մոտ կանգնած մարդու դերն անգնահատելի է: Կոմիտասի դիպուկ բնութագրմամբ ցանկացած ազգի ավանդական երգ ու նվագ

¹ In an intensive care unit bristling with technology, this new field reminds us that medicine doesn't always come from a new drug or surgery – sometimes it's as simple as parents connecting to their children with an age-old source of comfort. A gentle tune.

ստեղծվում է գյուղում, գյուղացու կողմից ու եթե ուզում ենք ծանոթանալ այս կամ այն ազգի տիպական երգամտածողությանը, ապա պետք է փնտրել, լսել հենց դրանք [7, էջ 146]:

Կոմիտասի այս դիպուկ ու տեղին դիտարկումից շատ չանցած՝ հայ ժողովուրդը իրեն մնացած փոքրիկ հողակտորով անցավ ԽՍՀՄ կազմ: Ինչին հաջորդեց, որոշ դեպքերում հատուկ, միտումնավոր ավանդականի ու ազգայինի «լռեցում», որն էլ եղավ սովետական միության տարածքում հայ ժողովրդի համեմատաբար ապահով ու խաղաղ գոյատևման ու զարգացման պայմաններից մեկը: Այդ յոթ տասնամյակի ընթացքում, չհաշված մի քանի ազգայնական ալիքների ու պոռթկումների, որոնք լայն թափ ստացան հատկապես 1960-ականներից սկսած, վառ արտահայտված ազգայինն այնքան էլ տարածված չէր: Այս սերնդի ականջը անաղարտ ավանդական արվեստի փոխարեն «լցվեց» ռադիոյով, հեռուստատեսությամբ շրջանառվող համասովետական, մեր դեպքում նաև համակովկասյան, երաժշտական մշակույթով: XX դարի վերջին սերունդների երկխոսության բացակայությունը հանգեցրեց մի այնպիսի իրողության, որում մի ողջ սերունդ կամ դրա ահռելի շերտ ոչ թե չէր սիրում, գնահատում կամ ընդունում իր ազգայինը, ավանդականը, այլ չէր ճանաչում այն:

Այսօր, շատ դեպքերում գիտակցելով ավանդական մշակույթի արժեքն ու դրա կարևոր դերը մարդու կյանքում, թեկուզ միջավայրից, գործառույթից կտրված ամկա է դեպի ավանդականը վերադառնալու ներքին մղում, ցանկություն: Վերջին տասնամյակում, հատկապես երիտասարդ սերունդը, ակնհայտ հետաքրքրություն է ցուցաբերում ավանդական արվեստի, դրա տարբեր տեսակների հանդեպ: Այդ են վկայում ավանդական երգի-պարի օրեցօր ավելացող խմբերը, դրանց կողմից իրականացվող բաց դասերին

մարդկանց մեծ մասնակցությունը, ՀՀ և ԱՀ հանրակրթական դպրոցներում ներդրված «Ազգային երգ ու պար» առարկայի մեծ հաջողությունը՝ պայմանավորված երեխաների ոգևորությամբ:

Վստահ ենք, այս գործընթացները տասնամյակներ անց կթողնեն իրենց դրական ազդեցությունը ոչ միայն ազգային ինքնագիտակցության, այլ նաև մեզ հետաքրքրող Ժանրի, ավանդական օրորի կենցաղ վերադառնալու, ինչու չէ, նաև ավանդականի զգացողությունը կրող սերնդի կողմից նոր երգերի ստեղծման տեսանկյունից ևս: Մեր կողմից մայրիկների շրջանակում իրականացված հարցումներն արդեն իսկ հուսադրող են, բայց խնդիրներ կան նրանց կողմից երեխայի համար կատարվող նյութի ընտրության հարցում, այդ առումով շատ անելիքներ դեռ առջևում են:

Վերը նշված հարցումը սոցիալական էր, որն իրականացրել ենք բացառապես մայրիկներից կազմված մի խմբում: Նախ շնորհակալությամբ նշենք, որ մոտ 200 արձագանք եղավ, որոնց 90 և ավել տոկոսի պատասխանը դրական էր: Պարզվում է, որ նույնիսկ XXI դարի բազմազբաղ մայրիկը ևս, մի դեպքում գիտակցաբար¹ կամ գուցե ներքին զգացողությամբ՝ ենթագիտակցաբար հասկանում է օրորի կարևոր դերը մանկիկի առողջ զարգացման մեջ²:

¹ Քանի որ, ինչպես վերը ներկայացրեցինք, արդի գիտությունն ապացուցել է օրորի կամ երգով երեխային քնեցնելու ֆիզիոլոգիական ու հոգեբանական դրական ազդեցության փաստը:

² Ինչպես իրավացիորեն նշեց հարցման մասնակից Վեներա Վարդանյանը. «Ես բացարձակ անտաղանդ եմ, բայց անպայման երգում եմ: Երգել եմ «Արի իմ սոխակ», «Տերունական աղոթք», այլ հոգևոր երգեր հատկապես «Ամեն օրհնություն»-ը, անչափ հաճելի ու կամուրջներ կապող է օրորը, ամենակարևորն է, որ մնում ես մենակ հրաշքի հետ»:

Մարդիկ օրորը

Յանտուսյ Գարեգին (Մատուրյան, 18 տ.
վերձանությունը Անի հովարյանի)

[illegible]

Չորոք, սյուրք, սյուրք, սյուրք...
 Չորոք, սյուրք, սյուրք, սյուրք, սյուրք...
 Դայու բալա, Մորդի տղա,
 անուշ ընի, բաբալ լրա:
 Դայու բալա, Մորդի տղա,
 անուշ ընի, բաբալ լրա:

Ծեռտերը թո կըլխավորդ. շոռ կյան,
Ծեռտերը թո կըլխավորդ. շոռ կյան,
դե ջոն իլ, դե ջոն իլ, բաթայ ըրա,
դե ջոն իլ, դե ջոն իլ, բաթայ ըրա:

Նախշում տղա. դայու բալա,
Արդի տղա, բաբայ ըրա:
Նախշում տղա. դայու բալա,
դե քոն իլ. բաբայ ըրա:

Ամպօրո՛ւ, շնչ տոյո՛ւ բո՛ն ինձս
Աստղերո՛ւ մեջ տոյո՛ւ օրորվէս:

Քաբայ ըր.մ. դույնո թալա,
անո՛ւ շ ըննի, քաբայ սարս
Բայ իմ թալա, Աըրդի տղա,
թաբայ լըռ, թաբայ լըռ՝

Արևոյ Կարմիր, տեղիւն կանաչ,
Բախտոյ էրզյան, ճանախեղ հալալ:

Օրոր, օրոր, օրոր, օրոր,
 օրոր, օրոր, օրոր թալալ:
 Օրոր, օրոր, օրոր, օրոր,
 օրոր, օրոր, օրոր թալալ:

¹ Երկրի շարունակությունն լուծնելը մեղակայացնում է Հրապճապեղան օդային կառույցի վրա՝ դիմնված իմնալավիկությամբ:

Պարզեցինք, որ մայրիկների կամ խնամողների մի մասը երեխաների համար երգում է իրենց իսկ մանկության ժամանակ լսած,

սովորած օրորոցայիններ ու այլ հանդարտ բնույթով երգեր¹: Մի մեծ խումբ, նույնիսկ եթե իրենց համարում են ոչ այնքան տաղանդավոր, ունեն սեփական հորինվածքներ՝ հենց իրենց ձագուկների համար: Մեր խնդրանքին ընդառաջ որոշները ձայնագրեցին և մեզ տրամադրեցին իրենց «հորինվածքը»: Եղածներից հատկապես հետաքրքրական էր մի պատանու երգած օրոր, որ հորինել է քրոջ տղայի համար:

Նմուշի հետաքրքրական լինելն էլ պատահական չէ. բանն այն է, որ հորինողը, չնայած ծնվել ու մեծացել է քաղաքում, սակայն ավանդական արվեստով հետաքրքրված, կարելի է ասել ավանդականից «տեղեկացված» մեկն է, ով ոչ միայն շատ լսել և լսում է ավանդական երգեր, կարդում ազգագրական նյութեր, այլ նաև ինքն էլ ավանդական պարերի գիտակ է ու կատարող: Միայն այս գիտելիքի ու զգացողության հիմքով կարող ենք բացատրել մեր օրերում ստեղծված այս նմուշի ավանդական մտածողության վառ կնիք ունենալու փաստը:

Երևույթը կարևորում ենք այնքանով, որ սա կարող է լինել ավանդական մշակույթի վերածնման օրինակ ու ճանապարհ՝ երբ հնարավոր է ավանդականը պահպանել կամ նույնիսկ մեր օրերում հորինել այդ մտածողությամբ, այն դեպքում եթե դու այդ գիտելիքի կրողն ես, հետևաբար՝ շարունակողը: Ստացվում է, որ եթե ավանդական արվեստը բավականաչափ տարածվի և դառնա ճանաչելի՝ նոր սերունդը կհորինի այդ ոգով:

¹ «Մուրճն ընկել է», «Արի, իմ տիսակ», «Спят усталые игрушки» և այս սերնդին ծանոթ այլ երգեր:

Օգտվելով առիթից՝ այդ հարթակում տեղադրեցինք ավանդական օրոքների ժամանակակից կատարումների¹ մի քանի հղում՝ արձագանքներն ուղղակի շմեցնող էին: Մայրիկների մեծ մասի համար այդ նյութն ուղղակի «հայտնություն» էր, իսկ այն քերն, ովքեր տեղեկացված էին այդ շերտից նշեցին, որ անպայման կատարում են՝ անկախ ձայնային հնարավորություններից:

Մեր կողմից ուշադրության արժանացավ նաև «Անատոլիական պատմություն» ֆիլմում մեկ ավանդական օրոքի կիրառությունը² և դրա հետ կապված հանրության մեծ արձագանքը³:

Եզրակացություն

Այսպիսով, ժողովրդի կողմից տիեզերական գիտելիքի մաս կազմող օրոքոցային երգի գորավոր դերը երեխայի առողջ զարգացման մեջ այսօր արդեն գիտությամբ է ապացուցված: Ասվածն իբրև ինֆորմացիա պետք է շրջանառել երիտասարդ սերնդի մոտ՝ կարևորելով օրոքի դերը ծնող-երեխա ամուր կապի մեջ:

Մյուս կողմից, պետք է աշխատանքներ տանել կատարվելիք նմուշների ընտրությունը բարելավվելու ուղղությամբ, քանի որ ինչպես վերը նշվեց հետաքրքրող ժանրը իր համամարդկային նշանակությամբ հանդերձ յուրաքանչյուր ազգի մշակութային ինքնության խորհրդանիշներից է:

¹ Որոնք համեմատած մեր կարծիքով ոչ այնքան հաջող էլեկտրոնային գործիքավորմամբ Talin օրոքոցայինների նախագծի. <https://www.youtube.com/watch?v=oMOnXoINqwE>, ունեին անհամեմատ ավելի քիչ դիտումներ, որը համարում ենք ուսումնասիրողներիս և գուցե նաև կատարողների բացթողումը:

² <https://www.youtube.com/watch?v=GbbEA-BWiLI>

³ Տես հետևյալ հղման մեկնաբանությունները. <https://www.facebook.com/watch/?v=588614785336569>

Ամփոփում

Օրորոցային երգը, որ երեխային դեպի քուն ուղեկցող երաժշտաբանաստեղծական ժանր է, համամարդկային երևույթ. օրոր երգում են ամենուր ուր կա ծնունդ ու կյանք: Մյուս կողմից այն յուրաքանչյուր ազգի ավանդական, տիպական երաժշտամտածողությամբ առանձնացող և իրենում այդ տիպականը խիտ «գույներով» արտահայտող ժանրերից է: Այն, լինելով համամարդկային ֆենոմեն, ունենալով բազմաթիվ ընդհանրություններ, միևնույն ժամանակ, փաստորեն, հանդիսանում է որևէ ժողովրդի մշակութային ինքնության խորհրդանիշներից մեկը: Պատճառը, իհարկե ժողովրդական արվեստի փոխանցման միակ, բանավոր ճանապարհով սերունդների միջև երկխոսության «կամուրջն» է, որը հատկապես ավանդական արվեստի ակտիվ կենցաղավարման ժամանակաշրջանում եղել է ամուր ու անխախտ: Արդյունքում, ավանդական միջավայրն ապահովում էր սերնդավիճակային բնական ընթացք, երբ որևէ մեկի համար երգված օրորը դառնում էր իր իսկ կողմից երգվող՝ հաջորդող սերնդի համար:

Կարելի է ասել, որ այս գործառնություն ուղեկցող երգերով է երեխան ճանաչում իրեն շրջապատող աշխարհն ու իրականությունը, հետևաբար որքան գիտակցված և գտարյուն լինի խնամողի, հայկական միջավայրում հիմնականում երեխայի մոր կողմից ընտրված օրորոցայինը, այդքան ավելի ամուր կլինենք գոյաբանական պայքար հիշեցնող 21-րդ դարում առկա մարտահրավերների դեմ:

Վերջինիս հետ կապված կներկայացնենք մեր ուսումնասիրությունների արդյունքները և առաջարկները, որոնց հետևելու պարագայում կկարողանանք պահպանել ազգային դիմագիծն ու տեսակը, որը սկսվում է օրորոցից:

Բանալի բառեր՝ օրորոցային, երգ, սափանդակաւն, միջավայր, երկխոսություն, ժառանգություն, փոխանցում:

THE LULLABY AS “WORLD OBSERVATION”

Ani Hakobyan

NAS RA, Institute of Art, Armenia

